ԱԴՐԲԵՋԱՆԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ալեքսանդր Մանասյան[*]

Ուսումնասիրության կարոտ հարցեր հայոց քաղաքական օրակարգում

Ղարաբաղյան հակամարտության մասին մեր պատկերացումները, այնուամենայնիվ, դեռևս մնում են չհստակեցված: Պատճառներից են պատմական անցքերի և նույնիսկ բախման մերձավոր պատմության փաստերի և իրավաքաղաքական հիմքերի ոչ համարժեք, երբեմն էլ իրարամերժ ըմբռնումները: Սա, իր հերթին, իր պատճառն ունի: Հարյուրամյակներ շարունակ մենք անկախ պետականություն չունեինք և, բնական է, չունեինք համապատասխան ազգային արտաքին քաղաքական ծառայություններ, էլ չենք ասում՝ վերլուծական կենտրոններ: Եվ այսօր էլ ստացվել է այնպես, որ հազիվ թե որևէ մեկը՝ քաղաքական գործիչ կամ գիտնական, մեր ազգային արմատական շահերի տեսակետից համոզիչ ու ոչ հակասական պատասխաններ կարողանա տալ այնպիսի բազմաթիվ հարցերի, որոնցից կախված է մեր արտաքին քաղաքական վարքը ղարաբաղյան հարցում:

Օրինակ, ինչո՞ւ մինչև վերջերս մենք այլոց հետ հիմնահարցը որակում էինք զուտ քաղաքական՝ չկարևորելով հակամարտության անմիջական իրավական հիմքերը: Կամ՝ ինչպե՞ս պիտի համադրվի հայկական երկու պետականությունների արտաքին քաղաքական գործու-

[*] Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

նեությունը տարածաշրջանում ու նրա սահմաններից դուրս՝ միջազգային ասպարեզում միասնական ռազմավարություն ունենալու համար: Տարբեր պատասխաններ ստացող, երբեմն էլ բնավ չքննարկվող նման հարցեր շատ կան: Եվ դրանց թվում են այն հարցերը, որոնք վերաբերում են Արևելյան Անդրկովկասի հայությանը՝ ադրբեջանահայությանը:

Ո՞րն է ադրբեջանահայության տեղը 1988-ին սկսված մեր ազգային շարժման մեջ: Ո՞րն է նրա դերը տարածաշրջանային գործընթացներում և մեր գոյապահպանության հեռանկարում: Ի՞նչ դերակատարություն ունի մեր ժողովրդի այդ հատվածը ղարաբաղյան հակամարտության կարգավորման արդի փուլում: Հնարավո՞ր է արդյոք հասնել հակամարտության արդարացի կարգավորման՝ չտալով նրա հիմնական զոհի անունը[1]: Քաղաքական մեր շրջանակներն այս հարցերի պատասխանները չունեն, քանի որ քաղաքագիտական մեր միտքը դրանց ըստ ամենայնի չի անդրադառնում:

Պատմաքաղաքական ճեպանկար. հայերն Արևելյան Անդրկովկասում

Արևելյան Անդրկովկասում հայերն ապրել են հնուց ի վեր, Քռի ինչպես աջ, այնպես էլ ձախ ափում: Քուռն անտիկ բոլոր աղբյուրներում նշվում է որպես Հայաստանի հյուսիսարևելյան սահման: Քռի ձախ ափին հայկական Կամբեջան (հունա-հռոմեական աղբյուրներում՝ Կամբիսենա) գավառն էր, որն արաբական տիրապետության օրերին էլ հայոց արևելից կողմանց իշխանական տներին էր ենթարկվում:

428թ. հայոց պետականության անկումից հետո Պարսկաստանի կազմում հայտնված այս նահանգներում տոհմիկ հայկական իշխանական տների գլխավորությամբ պայքար է սկսվում հայոց պետականության վերականգնման համար: Եվ արդեն հինգերորդ դարի վերջե-

[1] Սրանք նոր հարցադրումներ չեն: Մենք դրանք մամուլում առաջադրել ենք դեռևս 1998թ., «Ազգ» օրաթերթի հունվարի 13-ի համարում զետեղված «Ադրբեջանի հայ ժողովուրդը «ղարաբաղյան» բախման մոռացված կողմ» հոդվածում:

րին հնագույն իշխանական տներից մեկի՝ Առանշահիկների առաջնորդները Պարսկաստանի կողմից ճանաչվեցին իրենց երկրի ժառանգական տերեր և ստացան թագավորական տիտղոս: Այնուհետև արաբների, թաթար-մոնղոլների, թուրք-սելջուկների մեկը մյուսին հաջորդած արշավանքների ու ասպատակությունների ընթացքում Առանշահիկների արյունն ու ոգին իրենց մեջ պահած բնիկ իշխանական տներին հաջողվեց մնալ երկրամասի տերեր և պահպանել հայ պետականության ավանդույթները՝ Արևելքին բնորոշ անկախ ու կիսանկախ թագավորությունների, իշխանությունների, խանությունների ու մելիքությունների ձևով: Դրանք գոյատևեցին ընդհուպ մինչև 19-րդ դարը, մինչև Արևելյան Անդրկովկասի միացումը Ռուսաստանին՝ ներկայացնելով հայոց արևելից կողմանց հատվածը որպես էթնիկական ու քաղաքական նշանակալից գործոններից մեկը ողջ տարածաշրջանում:

Ռուսաստանի կազմում Արևելյան Անդրկովկասի ժողովուրդներին նոր փորձություններ էին սպասում: Կայսրությունը տեղի գունեղ էթնիկական նկարագիրը դիտեց իբրև խոչընդոտ երկրամասի ռուսիֆիկացման իր ծրագրերի համար, որոնք ենթադրում էին այդ ժողովուրդների հեռացում իրենց ազգային ինքնությունից: Էթնիկական այդ բազմազանության անտեսման առաջին քայլը եղավ այն, որ կայսերական վիճակագիրները տեղի իսլամադավան ժողովուրդներին «միավորեցին» *պարսկաստանցիք* (*персияне*) ընդհանուր անվան տակ: Բայց դա վրիպում էր, որ շատ շուտ գիտակցվեց և ուղղվեց այն գլխավոր խնդրի տեսակետից, որին հետամուտ էր դեպի հարավ առաջացող Ռուսաստանը: Իսկ խնդիրը երկրատարածքի ժողովուրդներին ազգային դիմագծից զրկելն էր, այլ ոչ թե նրանցից պարսիկ սարքելը, որ մի տեսակ ոչ բացահայտ ձևով դրված էր *персияне* անվանման մեջ: Ահա թե ինչու շուտով տեղի մահմեդական ժողովուրդների համար շրջանառության մեջ դրվեց նոր ընդհանուր անուն՝ *մուսուլմաններ:* Թուրք-թաթարը (որին ռուսական աղբյուրներում կովկասյան թաթար անվա-

նեցին), լեզգինը, ավարը, քուրդը, թալիշը կայսրության քաղաքականության մեջ նույնացվեցին հավատքի բնութագրով և դիտվեցին որպես միատարր զանգված: Հավատքի հիմքով դրանց միավորման և առանձնացման հետևանքը եղավ այն, որ երկրատարածքի ժողովրդագրական նկարագիրը «տեղավորվեց» *մուսուլմաններ և քրիստոնյաներ* հասկացություններում, որոնք ցույց էին տալիս ազգաբնակչության միմյանց հակադիր հանրույթների բաժանարար գիծը: Տարանջատման հենց այդ գիծը հետագայում պիտի դառնար այն խրամատը, որի հակադիր կողմերում պիտի հայտնվեին այդ համայնքներն ապագա կոնֆլիկտներում, որոնց «օգնությանը» կայսրությունը պիտի դիմեր՝ կառավարելու համար բարդ այդ տարածաշրջանը: Թվում էր՝ բաժանարար բնագիծն անվրեպ էր բանաձևված: Սակայն շուտով պարզվեց, որ դա էլ է անհաջող, քանի որ երկրատարածք մտնող ռուսները՝ որպես քրիստոնյաներ, ներքաշված պիտի լինեին այդ հակամարտություններում: Երկրատարածքի էթնոքաղաքական նկարագրության այդ լեզուն պետք է վերանայվեր, և այն վերանայվեց: Շրջանառության մեջ դրվեց *մուսուլմաններ-հայեր* հասկացութային զույգը: Հակառակ այն բանի, որ երկրատարածքի գլխավոր համայնքներն առանձնացվում էին տարբեր հիմունքներով (հայերն առանձնացվեցին ազգային, իսկ մուսուլմանները՝ հավատքի հիմքով), տերության քաղաքական գիծը մշակողներն այն համարժեք գտան իրողություններին և ամրագրեցին վիճակագրական ու քաղաքական փաստաթղթերում:

Ազգային քաղաքականության ոլորտի մյուս առաջնահերթ խնդիրը, որի լուծմանը ձեռնամուխ եղավ կայսրությունը, նոր կցված տարածքների իսլամադավան ժողովուրդներին պարսկական ազդեցությունից վերջնականապես հեռացնելու խնդիրն էր: Դրա համար նա գործողության մեջ դրեց ապապարսկացման կամ իրանազերծման (ռուսական գրականության մեջ՝ *деиранизация* – Ա.Մ.) քաղաքականությունը՝ զուգահեռաբար նույն նպատակի համար նպաստելով մուսուլմանական

համայնքի մեջ թուրքական տարրի ամրապնդմանը[2]: 19-րդ դարի վերջին տասնամյակներին «թուրքացման հոսանքի» տակ ընկան Իրանական Ադրբեջանից (Ատրպատականից) օրինական կամ անլեգալ կերպով Արևելյան Անդրկովկաս տեղափոխված թուրքալեզու *ազարի* ցեղային անվանումն ունեցող վերաբնակները[3]: Որոշ հաշվարկներով՝ 19-րդ դարի վերջին քառորդին ավելի քան յոթ հարյուր հազար թուրքալեզու վերաբնակ է հաստատվել Արևելյան Անդրկովկասում[4]: Դա չէր հակասում կայսրության որդեգրած՝ երկրատարածքի իրանազերծման գծին: Կայսրությունը որևէ վտանգ չէր տեսնում թուրքալեզու իրանցիների ժողովրդագրական այդ գրոհի մեջ, և ինքն էլ, իր հերթին, երկրատարածքի ռուսականացման առումով ամրապնդում էր ռուս և ռուսալեզու ազգաբնակչության դիրքերը տնտեսական ու մշակութային կյանքում: Բայց նույնիսկ այս պայմաններում Բաքվի և Ելիզավետպոլի նահանգների հայությունը նշանակալից դիրքեր գրավեց արդյունաբերական զարգացման ծիրում հայտնված երկրամասի տնտեսական ու մշակութային կյանքում: Արհեստների մեջ բազմահմուտ հայերը պատրաստ գտնվեցին սկիզբ առած արդյունաբերական զարգացմանը և դարձան նոր ձևավորվող քաղաքների բանվորական ու մտավոր աշխատուժի հիմնական մատակարարը: Ապշերոնի նավթարդյունաբերական համալիրի մեջ ներդրված են երկրամասի հայերի թե՛ ֆիզիկական ուժը, թե՛ միտքը, թե՛ կապիտալը[5]:

---

[2] Քաղաքական այդ անցքերը լուսաբանված են Եվա-Մարիա Աուխի ուսումնասիրություններում: Տե՛ս, մասնավորապես, «Азербайджан и Россия: общества и государства» (Москва, 2001) ժողովածուում տեղադրված նրա «Между приспособлением и самоутверждением: ранний этап национальной идентичности в среде мусульманской интеллигенции и возникновение нового общества на юговосточном Кавказе (1875-1905)» հոդվածը (էջ 50-87): Անդրկովկասում Ռուսական կայսրության վարած քաղաքականությանը և դրա ազդեցությամբ իսլամադավան ժողովուրդների շրջանում տեցի ունեցած զարգացումներին է անդրադարձել Յորգ Բաբերովսկին իր «Цивилизаторская миссия и национализм в Закавказье (1828-1914гг.)» ծավալուն հետազոտության մեջ:

[3] Նրանց ռուսական վարչական փաստաթղթերում անվանեցին օտխոդնիկներ (*отходники*):

[4] Տե՛ս История Азербайджана (в 3-х томах), том II, Баку, 1960, стр. 253-262:

[5] Մանրամասն տե՛ս *Խաչատուր Դաղայան*, «Հայերը և Բաքուն» (Երևան, 2006), ինչպես նաև *Գևորգ Ստեփանյան,* «Բաքու քաղաքի հայության պատմությունը» (Երևան, 2011) և «Armenians of Baku Provance in the second half of the 19-th century» (Yerevan, 2013) հիմնարար աշխատությունները:

19-20-րդ դդ. սահմանագլխին Արևելյան Անդրկովկասի հայությունը նոր մի առաքելություն ստանձնեց: Բանվորական շարժման ալիքներով փոխանցվող սոցիալական արդարության ու ազատախոհության հեղափոխական նոր գաղափարներին հաղորդակից հայությունը դարձավ դրանց հիմնական կրողն ու տարածողը երկրամասում: Միանգամայն հասկանալի էր ցարական իշխանությունների անբարեհաճ վերաբերմունքը երկրամասի հայության նկատմամբ: 1905-1907թթ. ռուսական իշխանությունները հրահրեցին հայ-թաթարական բախումներ և կանգնեցին թուրք ամբոխի կողմը: Բոլշևիկյան հայտնի գործիչներից մեկը՝ Վ.Վորովսկին, 1906թ. գրած իր «Հեղափոխությունը և հակահեղափոխությունը» հոդվածում հետևյալ կերպ է ներկայացնում այդ փաստը. «…Կառավարության աչքում հայերը դառնում են հեղափոխության այն նույն խորհրդանիշը, ինչպիսին հրեաներն էին արևմտյան կամ հարավարևմտյան Ռուսաստանում: Այդ հեղափոխական ուժի դեմ պայքարելու համար մոբիլիզացվում են թաթարները՝ Կովկասի բնակչության այն մասը, որն իր սոցիալական վիճակով և իր կրոնական հավատալիքներով ամենից շատ էր տարբերվում հայերից,… թաթարներին լրիվ ազատություն էր ընձեռվում սպանելու, բռնանալու, թալանելու»[6]:

Սակայն նույնիսկ այս պարագայում Արևելյան Անդրկովկասի էթնոքաղաքական հաշվեկշռում հայկական գործոնի դերը շարունակում էր անկասելի աճել՝ շնորհիվ երկրատարածքի արդյունաբերական զարգացման և դրանում հայերի դերի մեծացման: Դեպքերի զարգացման այս ընթացքն ընդհատվեց 1917-ին, երբ Ռուսաստանը մտավ հեղափոխության հորձանուտը:

[6] *В.В. Ворвский,* Сочинения. Т. 3, М., 1933, с. 106-107.

1918-1920 թվականներ. Արևելյան Անդրկովկասի շուրջ էթնոքաղաքական հակամարտության սկիզբը հայերի և կովկասյան թաթարների միջև. թուրքական ռազմական ինտերվենցիան Անդրկովկաս

Ագրեսիվ նացիոնալիզմով վարակված կովկասյան թաթարներն[7] իսկույն հայտնվեցին Թուրքիայի ծավալապաշտական ծրագրերի ծիրում: Սակայն էթնոքաղաքական հաշվեկշիռը երկրատարածքում ակնհայտորեն նրանց օգտին չէր: Դրանով պիտի բացատրել այն փաստը, որ հակառակ կովկասյան թաթարների լիդերների՝ մուսավաթականների ճիգերի՝ 1917-ին նրանց չհաջողվեց Բաքվի նահանգում գրավել քաղաքական իշխանությունը: Արդյունաբերական Ապշերոնում քաղաքական իրադրությունը դուրս էր մուսավաթականների հսկողությունից: Պատահական չէր, որ 1917-ի նոյեմբերին, Պետրոգրադում ու Մոսկվայում Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից անմիջապես հետո, Բաքվում հաստատվեց խորհրդային իշխանություն[8]: Բաքվի կոմունայի ազգային հիմքը տեղի հայությունն էր: Եվ օրինաչափ էր, որ հենց հայազգի Ստեփան Շահումյանն էր նրա ղեկավարը: Այն հանգամանքը, որ նախ Բաքուն, իսկ այնուհետև՝ նահանգի մեծ մասը հայտնվեցին հայերի կողմից սատարվող իշխա-

[7] Կովկասյան թաթարները, ինչպես նշում են նրանց ինքնության հարցերով զբաղվող մասնագետները, 19-րդ դարի վերջերին ազգային-էթնիկական ինքնություն ձեռք չբերած «վիճակագրական հանրույթ» էին (տե՛ս *Тадеуш Свентоховский,* Русское правление, модернизаторские элиты и становление национальной идентичности в Азербайджане // Азербайджан и Россия: Общества и государства, М., 2001: Նույն ժողովածուում տե՛ս նաև՝ Ева-Мария Аух. Между приспособлением и самоутверждением. Ранний этап поисков национальной идентичности в среде мусульманской интеллигенции и возникновение нового общества на юго-восточном Кавказе (1875-1905 гг.): Թեմային անդրադարձել է նաև Յորգ Բաբերովսկին: Տե՛ս *Йорг Баберовский,* Цивилизаторская миссия и национализм в Закавказье // Ab imperio: Новая имперская история постсоветского пространства, Казань, 2004, стр. 307-352 .

[8] Հայ ազգաբնակչության քանակով մինչխորհրդային Բաքուն Անդրկովկասում եղել է երկրորդ քաղաքը Թբիլիսիից հետո: Բնական է, որ այն դարձել էր նաև ազգային մշակույթի կենտրոններից մեկը: Մեծ էր տեղի հայ մտավորականների ու բանվորական վերնախավի դերը արդյունաբերական քաղաքի տնտեսական ու քաղաքական կյանքում, հեղափոխական խմորումներում (տես՝ հավելված 1):

նությունների ձեռքում, արտացոլումն էր նահանգում հոգուտ նրանց ձևավորված էթնոքաղաքական հաշվեկշռի: Մերօրյա թուրք պատմաբաններն ու քաղաքագետները չեն թաքցնում պատմական այդ իրողությունը: Դրա համար էլ 1918-ի ամռանը գերմանացիների ուղեկցությամբ Բաքու հասած թուրքը վերջնագիր է ներկայացրել քաղաքի Հայոց ազգային խորհրդին[9]:

Արևելյան Անդրկովկասի հայության՝ հոգուտ խորհրդային իշխանության ընդունած քաղաքական կեցվածքը չի կարելի բացատրել գաղափարախոսական նկատառումներով: Կապիտալիզմի պայմաններում հայերն արդեն իսկ երկրատարածքի տնտեսության մեջ նվաճել էին իշխող դիրքեր: Բաքվում խորհրդային իշխանությանը սատարելու համար հայության քաղաքական կեցվածքում կային ավելի խոր շարժառիթներ: Ստեղծված իրադրության մեջ հայությունն ընտրություն պիտի կատարեր երկու տարբերակների միջև: Կամ պիտի պաշտպաներ խորհրդային իշխանությունն Ադրբեջանում ու սոցիալիստական ուղու վրա կանգնելով մնար Ռուսաստանի հովանու տակ (կամ նրա կազմում), կամ պաշտպանելով կապիտալիզմի պայմաններում Արևելյան Անդրկովկասում ձեռք բերած դիրքերը՝ դեմ դուրս գար Ադրբեջանի խորհրդայնացմանը՝ երկրամասը Ռուսաստանից պոկելու և թուրքական ազդեցության ոլորտն ընկնելու վտանգավոր հեռանկարով: Այդ ընտրությունը նա կատարում էր Թուրքիայում իրագործված Մեծ եղեռնի և դեռևս շարունակվող կոտորածների պայմաններում, և դրա ելքը դժվար չէր կանխատեսել: Արևելյան Անդրկովկասի հայությունն ընտրեց «Ռուսաստան, խորհրդային իշխանություն» տարբերակը, քանի որ մյուսն իր հետ բերում էր ֆիզիկական բնաջնջման իրական վտանգը: Նախահեղափոխական տարիներին տնտեսական ծաղկում ապրող և հսկայական հարստություններ կուտակած հայերը որոշեցին «ընդունել սոցիալիզմը» և մնալ Ռուսաս-

[9] Դիմելով Բաքվի հայոց ազգային խորհրդին՝ թուրքերն իրականում հող էին նախապատրաստում քաղաք մտնելուց հետո հայ ազգաբնակչության կոտորածների համար:

տանի հետ: Հասկանալի է դառնում նաև, թե ինչու Բաքվի կոմունան Անդրկովկասը պիտի հռչակեր Ռուսաստանի անբաժանելի մաս: Սրանք բոլորը 1917-1918թթ. երկրատարածքում ծավալված իրադարձությունների ընթացքը պայմանավորած փաստեր են:

Մասնավորապես, երբ 1918-ի մայիսին Թիֆլիսում հռչակվեցին երեք պետություններ՝ Հայաստանի Հանրապետությունը, Վրաստանի Հանրապետությունը և Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունը, պարզվեց որ թուրքական ծրագրով ասպարեզ մտած մուսավաթական Ադրբեջանի կառավարությունը չի կարող ժամանել Բաքու, քանի որ իշխանությունն այդտեղ գտնվում էր օրինաբար ընտրված և իրադրությունը լիիրավ վերահսկող Բաքվի խորհրդի ձեռքում: Պարզ դարձավ, որ կովկասյան թաթարները, որոնք Թուրքիայի հովանավորությամբ ու աջակցությամբ հռչակել էին նոր պետության ծնունդը, տնտեսական, քաղաքական ու ռազմական բավարար ներուժ չունեին թղթի վրա հռչակված պետությանը իրական բովանդակություն տալու համար: Դա ակնհայտ դարձավ նաև այն բանից հետո, երբ Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարները և նրանց կողմից ստեղծված գործադիր իշխանությունները նույն 1918-ին իրենց ձեռքը վերցրին իշխանությունը Լեռնային Ղարաբաղում և երկրամասը հռչակեցին Հայաստանի Հանրապետության անկապտելի մաս: Փաստորեն, Արևելյան Անդրկովկասի հսկայածավալ տարածքներ, որոնց նկատմամբ հավակնելու մտադրություններ ուներ մուսավաթականների կողմից հռչակված Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունը, ոչ միայն դուրս էին մուսավաթականների վարչաքաղաքական վերահսկողությունից, այլև ձևավորել էին իրենց օրինական իշխանությունները, որոնք մերժում էին մուսավաթական հավակնությունները: Թե՛ Բաքվում, թե՛ Շուշիում իշխանությունների ազգային հենարանը հայերն էին, և բնական է, որ երկրատարածքի ազգային-պետական կա-

ռուցվածքի շուրջ ծավալվող վեճը գիտակցվեց որպես նրա երկու գլխավոր համայնքների՝ հայերի և կովկասյան թաթարների վեճ:

Այդ պայմաններում հռչակված Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունն այդպես էլ «կմնար թղթի վրա», եթե, խառնակ իրադրությունից օգտվելով, Թուրքիան չներխուժեր Անդրկովկաս և հօգուտ կովկասյան թաթարների չմիջամտեր երկրատարածքի ազգային-տարածքային հարցերի շուրջ հայերի և կովկասյան թաթարների միջև ծագած հակամարտությանը:

Թուրքական ներխուժման գլխավոր թիրախները Բաքուն և Լեռնային Ղարաբաղն էին: Նրանց դիմակայող հիմնական ազգային ուժը թե՛ Ապշերոնում, թե՛ Ղարաբաղում հայերն էին: *Իսկ սա նշանակում է, որ մինչև թուրքական ներխուժումը և Բաքվի անկումը* ***ղարաբաղյան հակամարտություն*** *իբրև այդպիսին չկար: Կար էթնոքաղաքական հակամարտություն կովկասյան թաթարների ու հայերի միջև, որի առարկան ողջ Արևելյան Անդրկովկասի ազգային-պետական կարգավիճակն էր:*

1918թ. սեպտեմբերին թուրքական կանոնավոր զորքերը եռամսյա կատաղի մարտերից հետո գրավեցին Բաքուն և իշխանությունը տեղում հանձնեցին Գանձակից բերված մուսավաթական կառավարությանը: Ըստ էության, դա 20-րդ դարում Թուրքիայի կողմից ռազմական ինտերվենցիայով այլ ժողովուրդների տարածքներում նոր թուրքական պետություն հիմնելու Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությանը նախորդած փորձն էր: 1918-ին համաշխարհային պատերազմի և հեղափոխական ցնցումների խառնակ ժամանակներում Թուրքիային հաջողվեց հիմնականում հայերի կոտորածների միջոցով պատմական ասպարեզ հանել «դեմոկրատական» և «ինքնիշխան» մի հանրապետություն, որը, ըստ Թուրքիայի հետ կնքված գաղտնի համաձայնագրի, առանց վերջինիս իմացության ու համաձայնության՝ այլ պետությունների հետ հարաբերվելու իրավունք

չուներ[10]: Թուրք խաժամուժը և զորքը Բաքվում կազմակերպեցին հայերի եռօրյա սպանդ: Դա Հայոց ցեղասպանության շարունակությունն էր[11]: Բաքվում «վերջացնելով գործը»՝ թուրքական կանոնավոր բանակը և մուսավաթական զորամիավորումները շրջվեցին հետ, դեպի Լեռնային Ղարաբաղ: Ճանապարհին հրկիզվեցին տասնյակ հայկական և ուղիական գյուղեր:

Մահացու վտանգ էր կախված Լեռնային Ղարաբաղի՝ Արևելյան Անդրկովկասի հայության գլխավոր ամրոցի վրա: Սակայն ողջ Արևելյան Անդրկովկասից դեպի ղարաբաղյան լեռները նահանջած հայ կամավորականներին և Ղարաբաղի Հայոց ազգային խորհրդի գլխավորությամբ ստեղծված տեղի ինքնապաշտպանական զինված միավորումներին կենաց ու մահու կռվում հաջողվեց կանգնեցնել թուրքերին:

1918-1920թթ. Լեռնային Ղարաբաղը, փաստորեն, ինքնուրույն վարչաքաղաքական միավոր էր՝ ինքնիշխանության բոլոր ատրիբուտներով: Լեռնային Ղարաբաղը մնաց անառիկ, սակայն *Բաքվի անկումից հետո թուրքական դիվանագիտությանն ու քարոզչությանը հաջողվեց առավելագույնս օգտագործել իր միջամտության արդյունքները՝ ողջ Արևելյան Անդրկովկասի ազգային-պետական կառուցվածքի շուրջ վեճն աշխարհին ներկայացնելով նեղացված՝ որպես* ***ղարաբաղյան հարց:*** 1918-ին այդ հարցի էությունն այն էր, որ Լեռնային Ղարաբաղում չունենալով ոչ քաղաքական, ոչ վարչական, ոչ տնտեսական վերահսկողություն և ոչ էլ պատմական որևէ իրավունք, պանթուրքական ծրագերի իրագործման գործիք դարձած մուսավաթական Ադրբեջանը նրա նկատմամբ հանդես եկավ բացարձակ անհիմն տարածքային պահանջներով (այսօր էլ, 80 տարի անց, խնդրի էությունը մնում է նույնը): 1919թ. այն Ազգերի լիգա ներկայացրեց հո-

[10] Տես հավելված 2:

[11] Թեմայի մասին մեծաքանակ վավերագրական նյութեր է պարունակում «Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918–1920թթ.» փաստաթղթերի ժողովածուն (կազմողներ՝ պ. գ. թ. Ս.Միրզոյան, բ. գ. թ. Ա.Ղազիյան), Երևան, 2003:

ղային իր պահանջները: Պաշտոնապես ներկայացված քարտեզում այն տարածքները, որոնց նկատմամբ նա հավակնություններ ուներ, ձգվում էին Բաքվից մինչև Բաթում («ծովից ծով Ադրբեջան»)[12]: Ազգերի լիգան մերժեց իրեն անդամակցելու մուսավաթական Ադրբեջանի դիմումը հենց այն հիմնավորումով, որ այն հավակնում է իր կողմից չվերահսկվող, ուրեմն և իրեն չպատկանող տարածքների[13]: Այդպես էլ դե-յուրե չճանաչված, թուրքական ռազմական ինտերվենցիայի արդյունքում հայտնված և օրինական կամ փաստացի հաստատված սահմաններ ձեռք չբերած մուսավաթական ԱԴՀ-ն թողեց պատմության թատերաբեմը, երբ 1920թ. ապրիլի 28-ին Խորհրդային Ռուսաստանի 11-րդ կարմիր բանակը մտավ Բաքու, տապալեց խամաճիկային մուսավաթական կառավարությունը և «ապստամբած աշխատավորների անունից» այնտեղ հռչակեց խորհրդային իշխանություն: Ռուսական բանակը վերացրեց թուրքական բանակի կողմից ստեղծված պետականությունը և հիմնեց մի նորը:

Ադրբեջանահայությունը հեղափոխական ցնցումների տարիներին

Ազգերի հավասարության և բարեկամության կարգախոսներով պատմական ասպարեզ մտած բոլշևիզմի համար բազմազգ Արևելյան Անդրկովկասը լավագույն դաշտն էր ազգային հարցի «սկզբունքային նոր լուծումներ իրականացնելու» և հենց այդտեղ սոցիալիզմի ու պրոլետարական ինտերնացիոնալիզմի առավելությունը աշխարհին ցուցադրելու համար: Հենց Արևելյան Անդրկովկասի բազմազգ, խայ-

[12] Տե՛ս «Нагорный Карабах в международном праве и мировой политике. Документы и комментарий». Том 1, стр. 545.

[13] Ազգերի լիգայի հինգերորդ կոմիտեի՝ Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության լիգա ընդունվելու դիմումը մերժելու և այդ կապակցությամբ հայցող երկրի պատվիրակության ղեկավար Ա.Թոփչիբաշևի՝ Ազգերի լիգայի ասամբլեայի նախագահ Պ.Գիմանսին ուղղված նամակի տեքստերին ընթերցողը կարող է ծանոթանալ «Нагорный Карабах в международном праве и мировой политике. Документы и комментарий» ժողովածուի առաջին հատորում (էջ 592-595):

տաբղետ ազգային կազմը, նրա ոչ միատարր ազգային կերպարն էին այն հիմքը, որի վրա հենվեց բոլշևիզմը՝ այստեղ նոր տիպի (բնույթով ոչ ազգային) սոցիալիստական հանրապետություն հիմնելու իր ծրագրերում: Իրոք, Բաքուն այդ տարիներին, նույնիսկ թուրքական զորքերի և մուսավաթականների իրագործած ջարդերից հետո ուներ ավելի շատ հայկական ու ռուսական, քան թուրք-թաթարական դեմք ու դիմագիծ: Շրջանների բնակչության մեջ զգալի մաս էին կազմում թալիշները, լեզգիները, ավարները, քրդերը, ուդիները, դաղստանյան մյուս ժողովուրդները: Երկրամասի էթնիկական դիմանկարը վերջիններիս հետ մեկտեղ ձևավորում էին թաթերը, հրեաները և, վերջապես, շուրջ մեկ հարյուրամյակի պատմություն ունեցող, բայց արդեն ստվար ռուսական համայնքը: Այդ են վկայում 1921թ. Ադր. ԽՍՀ մի շարք գավառների գյուղական համայնքներում անցկացված մարդահամարի տվյալները: Դրանց ազգային կազմի վերաբերյալ ստացված նյութերը Ադրվիճվարչությունը նպատակահարմար էր գտել վերլուծել միմյանցից տարբեր՝ «ազգային ինքնորոշման» և «ազգային-տոհմային պատկանելության» հատկանիշներով: Եվ ահա պարզվել է, որ Բաքվի գավառի գյուղական համայնքների բնակչության 85,59%-ը ազգային պատկանելության տեսակետից հաշվառվել է որպես ադրբեջանցի թուրք, այն դեպքում, երբ տոհմային պատկանելությամբ այդ նույն ազգաբնակչության 83,50%-ն իրեն գիտակցում էր որպես թաթ[14]: Սակայն իրենց քաղաքական կշռով, այնուամենայնիվ, առանձնանում էին կովկասյան թաթարներն ու հայերը, իրողություն, որ մինչև հեղափոխու-

[14] Այս տվյալները վերցված են 1921թ. օգոստոսին Ադրբեջանում անցկացված այսպես կոչված գյուղատնտեսական մարդահամարի (Сельско-хозяйственная перепись Азербайджана 1921г.») վերաբերյալ հրատարակված հաշվետվություններից, որոնց նյութերը վերլուծված են Ադրբեջանում ժողովրդագրական գործընթացների դինամիկային նվիրված ուսումնասիրություններում: Հանգամանալից վերլուծություններ են տրված, մասնավորապես, Մ.Ավդեևի, Վ.Ալիշևսկու, Ն.Վոլկովայի հետազոտություններում (տե՛ս *М.Авдеев,* «Численность и племенной состав сельского населения Азербайджана по данным переписи 1921г.»; *В.Алишевский,* «Состав населения городов и поселений городского типа в уездах Азербайджана»; *Н.Г. Волкова,* «Этнические процессы в Закавказье в XIX-XX вв.» // Кавказский этнографический сборник, IV, М., 1969): Տե՛ս նաև *М.М. Карапетян,* «Этническая структура населения Нагорного Карабаха в 1921г.» Ер., 1991, с. 8:

թյունն ընդունվում էր Ռուսական կայսրության կողմից: Բոլշևիկները նույնպես Արևելյան Անդրկովկասը դիտեցին որպես հայերի և մուսուլմանների երկրամաս: Պատահական չէր, որ Բաքվի խորհրդայնացումից անմիջապես հետո Հողի դեկրետը և պետահիրավական մյուս ակտերը հռչակվեցին երեք լեզուներով՝ հայերեն, ռուսերեն և թուրքերեն[15]:

1920թ. ամռանը տարբեր ազգության բոլշևիկյան ակնառու գործիչներ, և նրանց մեջ՝ Նարիմանովը, Բաքվից հատուկ մի նամակով դիմեցին կենտրոնին՝ հիմնավորելով Ադրբեջանում ուժեղ «արտազգային կենտրոն» ստեղծելու գաղափարը: Այն, ըստ նամակագիրների, պետք է դառնար սոցիալիստական հեղափոխության առաջադիրքը մուսուլմանական Արևելքում[16]: Բոլշևիզմի աշխարհաքաղաքական ծրագրերում Ադր. ԽՍՀ արտազգային բնույթին տրվում էր սկզբունքային բնույթ: Որևէ այլ համատեքստում հսկայածավալ հայկական տարածքների օտարումը հօգուտ Ադր. ԽՍՀ-ի որևէ բացատրություն կամ հիմնավորում ստանալ չէր կարող: Միայն *արտազգային Ադր. ԽՍՀ-ի* գաղափարն էր տարածքային այդ կողոպուտը «բարետես» դարձնում, մեղմում ճչացող այն հակասությունը, որ կար բոլշևիզմի աշխարհաքաղաքական նկրտումներից բխող հայկական հողերի թալանի ու նախօրեին հեղափոխության կողմից հռչակված ազգերի ազատ ինքնորոշման և ժողովուրդների իրավահավասարության սկզբունքների միջև:

Պակաս կարևոր չէին արտաքին քաղաքական նկատառումները: Սիրաշահելով քեմալական Թուրքիային, որը բոլշևիկյան հաշվարկներով՝ առաջիններից մեկը պիտի կանգներ սոցիալիստական զարգացման ուղու վրա, Ադր. ԽՍՀ արտազգային բնույթի մասին կարգախոսներով Մոսկվան միաժամանակ փորձում էր փարատել Պարսկաստանի կասկածները, որին մտահոգում էր իր հյուսիսային սահմանների մոտ նոր թուրքական պետության ստեղծելու, իրանական

[15] Տես հավելված 3:

[16] Տե՛ս «К истории образования Нагорно-Карабахской Автономной Области Азербайджанской ССР. Документы и материалы», Баку, 1989, стр. 99-101.

տարածքների հաշվին «Մեծ Ադրբեջան» ստեղծելու հեռանկարը[17]: Այս բոլորից բացի, պետք էր նկատի ունենալ, որ Արևելյան Անդրկովկասի՝ Ադր. ԽՍՀ-ին հատկացվելիք տարածքներում կովկասյան թաթարների ազգային պետության ստեղծումն ուղղակի անբնական կլիներ, քանի որ դրանց հսկայական մասը պատմականորեն հայկական ու այդ պահին հայաբնակ էր՝ չխոսելով լեզգիների, թալիշների, թաթերի, ուդիների և մյուս ժողովուրդների մասին: 1920-ական թթ. երկրամասը տասնյակ ազգերի և ազգությունների ընդհանուր հայրենիքն էր:

Եվ այսպես, բոլշևիկյան կենտրոնը 1921թ. ձմռանն արդեն վերջնական որոշում էր ընդունել դեպի Արևելք հեղափոխության ծավալման համար Արևելյան Անդրկովկասում արտազգային խորհրդային հանրապետություն ստեղծելու մասին: Ըստ մտահղացման՝ դա պետք է լիներ երկրամասի ժողովուրդների սոցիալիստական նոր տիպի ***ընդհանուր պետություն***: Հանրապետությունը չանվանվեց ազգային սկզբունքով, ինչպես մյուս բոլոր հանրապետությունները: Թողնվեց *Ադրբեջանական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն* անվանումը՝ հարևան Պարսկաստանի հյուսիսարևմտյան գավառի ապօրինաբար յուրացված-սեփականած «Ադրբեջան» անունով, ապագայում իրանական Ադրբեջանին հավակնելու հեռանկարը պահելու համար[18]:

Բնական է, Մոսկվան չէր կարող իր ծրագրերն աշխարհին ներկայացնել ծավալապաշտական նկրտումների տեսքով կամ զուտ հե-

[17] Եվ պետք է նկատել, որ Երկրորդ աշխարհամարտի տարիներին Մոսկվան մոտ էր Իրանական Ադրբեջանը խորհրդային Ադրբեջանին կցելու արդեն 1920-ական թթ. հղացած ծրագրի իրականացմանը: Ինչպես տեսնում ենք, «Մեծ Ադրբեջանի» ծրագիրը XX դարում մի քանի անգամ ձեռքից ձեռք է անցել: Գաղափարը երկնել է Թուրքիան և փորձել այն օգտագործել Հարավային Կովկասի ու Իրանական Ադրբեջանի նկատմամբ իր հավակնություններն իրագործելու համար: Այնուհետև նույն գաղափարը հայտնվել է բոլշևիկների զինանոցում և օգտագործվել դեպի մահմեդական Արևելք ծավալապաշտական ծրագրերի իրականացման համար: Վերջապես դարավերջին, ԽՍՀՄ լուծարումից հետո, այն նորից հայտնվել է Թուրքիայի ձեռքում:

[18] Մենք չենք բացառում, որ հեղափոխությանն անմիջապես հաջորդած տարիներին Մոսկվայում եղել են ուժեր, որոնց համար Արևելյան Անդրկովկասի բնիկ ժողովուրդների ընդհանուր պետության ստեղծումը լոկ պատրվակ էր տեղում նոր թուրքական պետություն ստեղծելու համար:

ղափոխական ֆրազների քողի տակ: Կատարվող քայլերը պետք է ստանային նաև համապատասխան իրավական տեսք: Խորհրդային Ադրբեջանի՝ որպես տեղի ժողովուրդների *ընդհանուր պետության,* ստեղծումը նաև հենց այդ իրավական բարետեսության ապահովման խնդրին էր ծառայում: Մյուս կողմից՝ մի հանրապետությունից հոգուտ մյուսի տարածքների օտարումը, ինչ իրավական քողարկումով էլ արվեր, չէր կարող կամավոր զիջման ակտ լինել: Բռնությունն ու ապօրինությունն այսպես թե այնպես պետք է ուղեկցեին դրանց: Եվ դրա առաջին դրսևորումը Մոսկվայում 1921թ. մարտին կնքված Ռուս-թուրքական պայմանագիրն էր: Այդ պայմանագիրը միջազգային իրավական կամայականության դասական օրինակ է: Երկու պետություն՝ Ռուսաստանը և Թուրքիան, համատեղ որոշեցին մի երրորդ երկրի տարածք (Խորհրդային Հայաստանի անկապտելի մաս ճանաչված Նախիջևանը) տալ մի չորրորդ երկրի (Խորհրդային Ադրբեջանի) խնամակալությանը՝ չունենալով այդ երկրներից որևէ մեկի համաձայնությունը[19]: Այդ ապօրինությունը նույն թվականի հոկտեմբերին «շտկվեց» Կարսի պայմանագրով, որի տակ արդեն դրվեցին ոչ միայն Թուրքիայի և Ռուսաստանի, այլև Խորհրդային Հայաստանի և Ռուսաստանի ստորագրությունները[20]: Նախիջևանը Ադր. ԽՍՀ խնամակալությանը հանձնելը ստացավ «իրավական» տեսք[21]: Կուսակցական խորհրդաժողովներում այդ տարիներին «ընդունված կարգով» հայերին միշտ հորդորում էին չանհանգստանալ հայկական տարածքների ապագայով, քանի որ դրանք փոխանցվում էին ոչ ազգային, ինտերնացիոնալ մի հանրապետության: Իրականում դա հայկական հողերի օտարումը օրինական դարձնել չէր կարող: Կամայականությամբ պիտի ուղեկցվեր նաև Ադր. ԽՍՀ-ին Լեռնային Ղարաբաղի բռնակցումը, որը նույնպես արդեն ճանաչված էր Խորհրդային Հայաստանի ան-

[19] Документы внешней политики СССР, М., 1960. Т. IV, стр. 420-429.
[20] Документы внешней политики СССР, М., 1959. Т. III, , стр. 597-602.
[21] Տես հավելված 4:

կապտելի մաս: Երբ ՌԿ(բ)Կ Կովբյուրոյի հուլիսի 4-ի նիստը չընդունեց Լեռնային Ղարաբաղը Ադր. ԽՍՀ-ին հանձնելու որոշում, պահանջվեց բոլշևիկյան կենտրոնի ճնշումը, որն իրագործեց Ստալինը: Հուլիսի 5-ին նման հարցերի լուծման համար ոչ իրավասու կուսակցական մարմինը հարցը «լուծեց»՝ ողջ Լեռնային Ղարաբաղը (ոչ թե միայն ԼՂԻՄ նախկին տարածքը, ինչպես հաճախ ներկայացվում է) Ադր. ԽՍՀ-ին թողնելու մասին ապօրինի որոշման ձևով: Եվ դարձյալ Կովբյուրոյի որոշման հիմքում ընկած էր Ադր. ԽՍՀ՝ որպես հայերի և մուսուլմանների ոչ ազգային (ինտերնացիոնալ) հանրապետության գաղափարը: Դա ակնհայտ է դառնում որոշման հենց առաջին բառերից, որոնցում տրված է նրա քաղաքական հիմնավորումը. «Ելնելով մուսուլմանների և հայերի միջև ազգային հաշտության անհրաժեշտությունից…»[22]: Դրանով արձանագրվում էր այն փաստը, որ երկրատարածքի ազգային-պետական կառուցվածքի շուրջ հակամարտության կողմերը հայերը և մուսուլմաններն են (հակամարտությունն իրականում բորբորքված էր հայերի և կովկասյան թաթարների միջև, որոնք մեկ անգամ չէ, որ քողարկվել էին «մուսուլմաններ» ցուցանակով):

Խորհրդային տարիներ. աղրբեջանահայությունը՝ Ադր. ԽՍՀ հիմնադիր ժողովուրդ

1921-ի հուլիսից անմիջապես հետո Բաքուն տենդագին գործունեություն ծավալեց ողջ Լեռնային Ղարաբաղում հայկական ինքնավարություն ստեղծելու մասին Կովբյուրոյի որոշումը վիժեցնելու համար: Փաստարկը նույնն էր՝ արտազգային, ինտերնացիոնալ հանրապետությունում նպատակահարմար չէ ստեղծել ազգային ինքնավարություն: Համոզվելով, որ Մոսկվան հետ չի կանգնում որոշումից, Բաքուն, այնուամենայնիվ, չդադարեցրեց որոշման ձախողման փորձերը՝ այս անգամ այն մասնակիորեն կատարելու միջոցով: 1923թ. հունիսին հատուկ դեկրետով Ադրհեղկոմը հռչակեց ինքնավար մարզի

[22] Вестник архивов Армении. 1989, N2, док. 14, цтр. 77-78.

ստեղծումը Խորհրդային Հայաստանից պոկած Լեռնային Ղարաբաղի մի մասի վրա: Ի վերջո, հսկայական տարածքներ դուրս թողնվեցին մարզից: Դեկրետն առաջին անգամ շրջանառության մեջ մտցրեց «Լեռնային Ղարաբաղի հայկական մաս» արտահայտությունը: Սակայն նույնիսկ այդ «հայկական մասի» սահմանները կամայականորեն կտրտվեցին՝ մարզից դուրս թողնելով հարակից Շահումյանի, Խանլարի (Կենտրոնական Արցախ), Քարհատի ու Շամքորի (Հյուսիսային Արցախ) հայաբնակ շրջանները: Ազգաբնակչության բոլոր բողոքներին կենտրոնի ու Բաքվի պատասխանը նույնն էր՝ հայերն անհանգստանալու կարիք չունեն, քանի որ Ադր. ԽՍՀ-ն ոչ ազգային, արտազգային հանրապետություն է: Որոշ ժամանակ անց «արտազգային Ադրբեջան» արտահայտությունը դուրս մղվեց շրջանառությունից: Նրան փոխարինելու եկավ բոլշևիկյան բառապաշարից վերցված մեկ այլ՝ «ինտերնացիոնալ Ադրբեջան» բառակապակցությունը:

ԼՂԻՄ հիմնման մասին դեկրետում նույնպես համապատասխան ձևակերպումով Բաքուն անդրադառնում է նույն հարցին՝ Ադր. ԽՍՀ-ն որակելով որպես մուսուլմանների և հայերի «*միասնական պետական միություն*»: Ադրբեջանի կուսակցական առաջնորդ Ս.Կիրովը 1924թ. մայիսին Ադրբեջանի կոմկուսի VI համագումարում հատուկ ընդգծեց, որ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի ստեղծման մասին որոշումները պետաիրավական վճիռներ են, որոնք «սահմանում են հայերի և մուսուլմանների իրավական համակեցությունը» ողջ Ադրբեջանի տարածքում[23]: «Շնորհիվ դեկրետի ստեղծվում է այն անսասան հիմքը, որի վրա կարելի է կառուցել եղբայրական համակեցությունը ողջ հայ աշխատավորության հետ Ադրբեջանական Խորհրդային Հանրապետության սահմաններում». այսպես է արտահայտել ակտի պետական-իրավական իմաստը Ադրկոմկուսի «Բակինսկի ռաբոչի» պաշտոնաթերթը 1921թ. նոյեմբերի 21-ի համարում: 1920-ական թթ. բազմա-

[23] Տե՛ս Отчет ЦК АКП(б) VI съезду АКП(б).

թիվ փաստաթղթերում տեղ գտած և վերը մեր կողմից ընդգծված այդ ձևակերպումները հաստատումն են այն բանի, որ կովկասյան թաթարների հետ միասին հայերը դիտվել են որպես այդ նոր տիպի ոչ ազգային կամ ինտերնացիոնալ խորհրդային հանրապետության հիմնադիր և ուրեմն՝ պետականակիր ազգերից մեկը:

1970թ. մարդահամարի տվյալներով՝ նախկին Ադր. ԽՍՀ-ում ապրում էր շուրջ կես միլիոն հայ: Եվ դա՝ Բաքվի հավատ չներշնչող վիճակագրական ծառայությունների տվյալներով: Հանրապետությունում բնակվող հայերի մասին պատկերացում կազմելու համար բավական է նկատել, որ Քոի ձախափնյակում բնակվում էր հանրապետության հայ ազաբնակչության կեսից ավելին: Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում (ԼՂԻՄ) ապրում էր Ադր. ԽՍՀ հայության մոտ մեկ քառորդը: Այնպես որ, *եթե 1921թ. Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանից բռնությամբ չօտարվեր հօգուտ Ադր. ԽՍՀ-ի, միևնույն է՝ հայերը պիտի մնային Խորհրդային Ադրբեջանի հիմնադիր և հիմնական ժողովուրդներից մեկը՝ հանրապետությունում իրենց բնակության հազարամյա տարածքներով, նրա տնտեսական ու մշակութային պատմության տերերից մեկի կարգավիճակով:* Ժողովրդագրական, մշակութային և տնտեսական այդ փաստերը խիստ կարևոր են ինչպես պատմական անցյալում, այնպես էլ 20-րդ դարում Արևելյան Անդրկովկասում տեղի ունեցած էթնոքաղաքական գործընթացների բնույթը հասկանալու համար: Պատմությունը դասավորվել է այնպես, որ մարզը՝ որպես խորհրդային պետականության ձև, հիմնվել է Ադր. ԽՍՀ սահմաններում հայտնված հայկական տարածքների մի փոքրիկ մասում, և դրանից հետո հանրապետության հայությունը, որը մինչ այդ «*մուսուլմաններ-հայեր*» հարաբերությունների դաշտում միշտ հանդես է եկել որպես միասնական գործոն, հայտնվել է տարբեր կարգավիճակներում: Ինքնավար մարզի հայությունը ԼՂԻՄ-ի՝ խորհրդային տիպի այդ պետականության կրողն էր և ներ-

կայացված էր ԽՍՀՄ բարձրագույն օրենսդիր իշխանություններում: ԽՍՀՄ ԳԽ Ազգությունների խորհրդում նրան հատկացված էր համապատասխան քվոտա՝ պատգամավորական հինգ տեղ: Բայց դրանով հանդերձ Ադր. ԽՍՀ ողջ հայությունը, հանրապետության հիմնադրման քաղաքական գործընթացներից սկսած, երբ այն հիմնվեց որպես մուսուլմանների և հայերի «միասնական պետական միություն», ընդհուպ մինչև ԽՍՀՄ տրոհումը միասնաբար էր ներկայանում և միասնական էր ընկալվում որպես ազգային գործոն՝ որպես այդ հանրապետության հիմնադիր ժողովուրդ: Սակայն պետք է նկատվի կարևոր մի հանգամանք՝ ինչես 20-ական թվականներին, այնպես էլ հետագա տասնամյակներում հայկական ինքնավար մարզից դուրս, ԱդրԽՍՀ այլ շրջաններում ապրող հայությունը ԼՂԻՄ-ի մեջ տեսել է իր քաղաքական պաշտպանվածության երաշխավորին[24]:

1920-ական թթ. ԼՂԻՄ-ը բոլոր պաշտոնական փաստաթղթերում դիտվում էր որպես ազգային-պետական կազմավորում՝ պատշաճ բոլոր ատրիբուտներով: Ադր. ԽՍՀ բյուջեում և տնտեսական հիմնարար բոլոր փաստաթղթերում ԼՂԻՄ-ը անվանվում է ազգային-պետական կազմավորում և առանձնացվում հատուկ տողով[25]: Հայերն ունեին հանրապետական կենտրոնական պաշտոնական մամուլ և ռադիոժամեր (հետագայում նաև հեռուստաժամ պետական հեռուստատեսությամբ): Ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի նախագահն ի պաշտոնե Ադր. ԽՍՀ գերագույն օրենսդիր մարմնի՝ Գերագույն խորհրդի նախագահի տեղակալ էր, որ պաշտոնների պետական աստիճանասանդղակում երկրորդ պաշտոնն էր:

[24] Դրա վկայություններից մեկն էլ այն է, որ կոտորածներից փրկված փախստական դարձած ադրբեջանահայերի հայրենակցական միությունները ԼՂՀ հետ են կապում հայրենի բնակավայրերը վերադառնալու հույսերը (տես հավելված 5):

[25] 1924-25 և 1925-1926թթ. Ադր. ԽՍՀ բյուջեի փաստաթղթերում, օրինակ, ինչպես Նախիջևանը, այնպես էլ ԼՂԻՄ-ը անվանվում են ազգային-պետական կազմավորումներ: Տե՛ս «К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР: документы и материалы», Баку, 1989, стр. 273: Փաստաթուղթը տես հավելված 6-ում:

1923թ. ընդունված «Պետական հաստատությունների ազգայնացման մասին» դեկրետով հայերենը ճանաչվում է որպես ԼՂԻՄ-ի հետ հարաբերվելու պաշտոնական լեզու[26]:

Հայերի ամրագրված տեղն ազգային պետական կառուցվածքում, ինչի մասին խոսում են նշված փաստերը, իրավական լուրջ բովանդակություն էր տալիս *«մուսուլմանների և հայերի միասնական պետական միություն»* քաղաքական գաղափարին: Սակայն ազգային հարաբերությունների իրական բովանդակությունը, ինչպես նշվեց, հետագա տասնամյակներում հեռանում էր հռչակված քաղաքական ուղեգծից և դրա մարմնավորման իրավական սկզբունքներից: Խորհրդային տարիներին նոր էթնոնիմն իբրև դիմակ հագած թուրքը միշտ աշխատում էր մոռացության տալ Ադր. ԽՍՀ ձևավորման հիմքում դրված սկզբունքները, այնինչ կենտրոնը, չնայած մատների արանքով էր նայում Ադր. ԽՍՀ-ում այլ ազգերի բռնի ուծացման և հայերի դուրսմղման քաղաքականությանը, այնուամենայնիվ, երբեք իր թղթապանակից չհանեց այն:

Նույն թվականներին արվեցին երկրատարածքի պատմությունը նոր ազգի հետ կապելու առաջին քայլերը: Առաջին հերթին սկսվեց պարսկական պատմության և մշակույթի թալանը, ինչը հրաշալի տեղավորվում էր պարսկական Ադրբեջանի (Ատրպատականի) նկատմամբ ապագա հավակնությունների ծրագրում: Ճիշտ է, այդ տարիներին Մոսկվայի կողմից լռելյայն հովանավորվող այդ գործընթացը նշանակալի արդյունքներ չէր տալիս ազգային կադրերի պակասի

[26] Собрание узаконений и распоряжений Рабоче-крестянского правительства АССР за 1923г., стр. 384-385. Մեր օրերում գրեթե մոռացության է տրված այն հանգամանքը, որ Խորհրդային Հայաստանից Կարսի պայմանագրով ապօրինաբար խլված Նախիջևանում ինքնավար հանրապետության հիմնումը նույնպես իրագործվել է արտազգային Ադրբեջան ձևավորելու հայեցակարգի համատեքստում: Ինքնին պարզ էր, որ եթե Ադր. ԽՍՀ-ը դիտվեր որպես ազգային հանրապետություն, ապա անիմաստ կլիներ նրա կազմում ունենալ տիտղոսակիր ազգի ինքնավարություն: Պատահական չէ, որ, ինչպես նշվեց վերը, Նախիջևանի Ինքնավար Հանրապետության առաջին դրոշը կրում էր նաև ինքնավարության հայերեն անվանումը:

պատճառով, ինչը լուծվեց պատերազմից հետո, 1960-ական թթ. վերջերին: Հենց այդ ժամանակ է սկսվում հանրապետությունից հայերին դուրս մղելու նոր փուլը: Տնտեսական, քաղաքական խտրականությունն ու հետապնդումները ընդունեցին անսքող բնույթ: Դա հանրապետության ժողովուրդների՝ ազգերի բարեկամության մասին կարգախոսներով, կենտրոնի լռելյայն համաձայնությամբ տարվող ներքին գաղութացման ու շահագործման գործընթաց էր: Անարդարությունն ընդունել էր ցինիկ բնույթ: Բողոքողները մեղադրվում էին ազգայնականության մեջ: Պատերազմից հետո Բաքվում փակվեց Հայկական պետական դրամատիկական թատրոնը: Բուհերում, բացառությամբ պետական մանկավարժական ինստիտուտի, փակվեցին հայկական բաժինները:

Քաղաքաբնակ հայը երեխային ստիպված տալիս էր ռուսական դպրոց՝ բարձրագույն ուսուցման հեռանկարը չկորցնելու համար[27]: Այդ բոլորով հանդերձ, հանդիսությունների ժամանակ մոռացության չէին տրվում ինտերնացիոնալ Ադրբեջանի մասին կարգախոսները: Պատեհ-անպատեհ հիշեցվում էին ադրբեջանահայության՝ որպես Ադր. ԽՍՀ երկրորդ պետականակիր ազգի, իրավական կարգավիճակի ատրիբուտները: Ամենից շատ, թերևս, օգտագործվում էր «ինտերնացիոնալ Խորհրդային Ադրբեջան» բանաձևի տեսք ձեռք բերած արտահայտությունը, որը Բաքուն փորձում էր դարձնել զուտ ձևական, քարոզչական կարգախոս՝ ըստ հարմարության օգտագործելու և ազգային հարցում հանրապետությունում տարվող ռասայական քաղա-

[27] Բնական է, որ դա խրախուսվում էր հանրապետության ռուսիֆիկացման գիծն առաջ տանող Մոսկվայի կողմից: 1960-ականներին Բաքվի քաղաքական վերնախավում արդեն իշխող որոշ ազգայնական ուժեր փորձեցին ադրբեջաներենն ամրագրել որպես հանրապետության պետական լեզու: Կենտրոնը Բաքու գործուղեց Միկոյանին, որը հանրապետության կուսակցական ակտիվի ժողովում ունեցած իր ելույթում հիշեցրեց, որ Խորհրդային Ադրբեջանը հիմնվել է որպես ինտերնացիոնալ (ասել է թե՝ ոչ ազգային) հանրապետություն և մնում է այդպիսին: Միկոյանին հաջողվեց համոզել և հարցը հանել օրակարգից: Այդ ժողովին ներկա է եղել փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆ. Միհրան Մովսեսի Խաչատրյանը՝ այն ժամանակ որպես կուսակցության մարզային կոմիտեի գաղափարախոսության բաժնի պատասխանատու աշխատող:

քականությունը քողարկելու համար: Եվ պետք է ասել, որ դա նրան հաջողվում էր: Բաքուն հետևողականորեն առաջ էր տանում իր գիծը: Արտաքուստ ադրբեջանահայության՝ հանրապետության հիմնադիր ժողովուրդներից մեկի իրավունքները և իրավական կարգավիճակն ընդունվում և պահպանվում էին ճիշտ այնպես, ինչպես անընդհատ տարփողվում էր Ադր. ԽՍՀ ինտերնացիոնալ բնույթը: Իրականում այդ քողի տակ իրագործվում էր Ադր. ԽՍՀ-ի՝ որպես հայերի և մուսուլմանների միասնական պետության, գաղափարի աստիճանական արժեզրկման և հանրապետության թուրքացման գիծը: Դա ակնհայտ է դառնում 1920-ական ու 1980-ական թթ. պետահիրավական փաստաթղթերում շրջանառվող բանաձևումների համեմատության մեջ:

1930-ական թթ. ադրբեջանական ազգ կազմավորելու ստալինյան ծրագրով *կովկասյան թաթարներին* մեկեն տրվեց նոր ինքնանվանում՝ «ադրբեջանցիներ»: Հանրապետության անունը որպես էթնոնիմ սեփականելու մեխանիկական այդ հնարքով երեկվա կովկասյան թաթարը դարձավ տիտղոսակիր ժողովուրդ: Որպես արտազգային հիմնված հանրապետությունն այդ աճպարարությամբ «դարձավ» ազգային հանրապետություն: 1960-70-ական թթ. Ադր. ԽՍՀ հայության հետ կապված հարցերը սկսեցին հետևողականորեն նույնացվել-հանգեցվել ԼՂ ինքնավար մարզի խնդիրներին: Նպատակը պարզ էր՝ հանրապետության «կերպարից» աստիճանաբար դուրս մղել ադրբեջանահայությանը՝ նրա տեղը քաղաքական, իրավական, աշխարհագրական «դաշտերից» ջնջելու համար: 1960-70-ական թթ. այդ գործընթացը նոր թափ ստացավ: Ահա թե ինչու ԼՂԻՄ ազգաբնակչությունը, աչքի առաջ ունենալով դա և Նախիջևանի՝ Մոսկվայի անվրդով հայացքի ներքո տեղի ունեցող հայաթափումը, նորից բարձրացրեց մարզը Հայկական ԽՍՀ-ին միավորելու հարցը: Մինչ այդ զանգվածային ստորագրահավաքների ձևով ԼՂԻՄ բնակչությունը մի քանի անգամ դիմել էր կենտրոնական իշխանություններին մարզը ՀԽՍՀ-ին վերամիավորելու պահանջով:

Այն մասին, թե ինչու 1988-ին Ստեփանակերտը շրջանցեց ադրբեջանահայության հարցը

Բնական է, որ Ղարաբաղյան շարժման գաղափարախոսները պետք է հաշվի նստեին այն իրողության հետ, որ մեր ազգի ստվար այդ հատվածը Ադր. ԽՍՀ ներսում տարբեր «իրավաքաղաքական միջավայրերում» է հայտնված: Կար արցախահայություն, և կար Քռից անդին ապրող ադրբեջանահայություն: Եվ հետո՝ արցախահայության մի մասն իր տարածքներով գտնվում էր մարզի սահմաններից դուրս՝ նրա հարակից շրջաններում: Շարժումը նախապատրաստող ուժերը (եթե այդպիսիք կային) և հրապարակում հայտնված նրա առաջնորդները (այդպիսիք հաստատ կային) այդ իրողություններն անտեսելու իրավունք չունեին, քանի որ խոսքը հարյուր հազարավոր հայերի և նրանց հազարամյա տարածքների մասին էր:

Իրադարձությունները, սակայն, ցույց տվեցին, որ դրանք, մեղմ ասած, հաշվառված չէին: Ավելին, մարզի սահմաններից դուրս ապրող հայության հարցերը շրջանցվում կամ հետևողականորեն անտեսվում էին: Դա, անկասկած, քաղաքական որոշակի դիրքորոշման արտահայտություն էր, որն իր մարմնավորումը գտավ մեր հետագա քայլերում: Բայց ամեն ինչի մասին՝ հերթով:

Պաշտոնապես ընդունված փաստաթղթի տեսքով այդ մոտեցումն արձանագրված է 1988թ. փետրվարի 20-ին ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի արտահերթ XX նստաշրջանի հայտնի որոշման մեջ: Տեքստը կարճ է և կարելի է մեջբերել ամբողջությամբ. «Ընդառաջելով ԼՂԻՄ աշխատավորների ցանկություններին՝ խնդրել Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդին խոր ըմբռնման զգացում դրսևորել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իղձերին և լուծել ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմ հանձնելու հարցը, միաժամանակ միջնորդել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի

առջև՝ ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմ հանձնելու հարցի դրական լուծմանը»[28]:

Ինչպես պարզորոշ երևում է որոշման տեքստից, ԼՂԻՄ ժողպատգամավորների մարզային խարհուրդը դնում է միայն ինքնավար մարզը ՀԽՍՀ-ին վերաենթարկելու հարցը: Ստեփանակերտում հրաշալի գիտեին, որ հանրապետության մյուս շրջաններում մոտ երեք անգամ ավելի շատ հայեր են ապրում, քան մարզում: Միայն Բաքվում գրեթե քառորդ միլիոն հայ կար: Գիտեին, որ ազգային հալածանքների ու հետապնդումների տեսակետից նրանց վիճակը ոչնչով չի տարբերվում մարզի հայ բնակչության վիճակից: Գիտեին, որ խորհրդային տարիներին Նախիջևանը, ըստ էության, հայաթափվել է: Գիտեին, որ ողջ հանրապետության տարածքում այլազգիների և հատկապես հայերի նկատմամբ վարվում է ռասիզմի բնույթ ընդունած ազգային խտրականության և բռնի ձուլման քաղաքականություն, որի հետևանքով հանրապետության էթնիկական քարտեզից անհետացել էր բնիկ ժողովուրդների մեծ մասը:

Այդ ամենը քաջ հայտնի էր մարզխորհրդի պատգամավորներին, և հենց այդ փաստերն էին դարձել մարզխորհրդի որոշման՝ խորհրդային հասարակության համար աննախադեպ այդ ակցիայի շարժառիթները: Եվ չնայած դրան, նրանք որոշեցին սահմանափակվել մարզի վերաենթարկման հարցով և ոչ մի բառ չասել նրա սահմաններից դուրս ապրող հայության հիմնախնդիրների մասին:

Ճի՞շտ էր արդյոք դա, թե՞ սխալ: 1988-ի փետրվարի 20-ին նման մոտեցումը գուցեև ինչ-որ արդարացում ունեցել է: Բայց միայն փետրվարի 20-ին, երբ ոչ ոքի մտքով անգամ չէր անցնում, որ խորհրդային հզոր տերությանն ընդամենը երեք տարի է մնացել ապրելու, երբ թվում էր, թե մարզը Հայկական ԽՍՀ կազմի մեջ մտցնելու քաղաքակիրթ ձևով արված հարցադրումը չէր կարող արյունալի կոտորածների պատճառ դառնալ: «Աշխարհի գերհզոր տերության մե՞ջ: Դա հնարա-

[28] «Խորհրդային Ղարաբաղ», 21 փետրվարի 1988թ.:

վոր չէ». այսպիսին էր մտայնությունը: Եվ ոչ միայն հայերի: Դա անհավանական էր թվում նույնիսկ այն բանից հետո, երբ Ադրբեջանի կոմկուսի կենտկոմից Ստեփանակերտ գործուղված Ասադովը կուսակցության մարզային կոմիտեի նիստերում փետրվարի 13-ին և 14-ին սպառնում էր, թե մարզի հարևան շրջաններից ավելի քան 100 հազար ադրբեջանցիներ պատրաստ են խուժել Ստեփանակերտ և իրենց ձևով լուծել հարցը: «Իսկ ի՞նչ է, սովետական իշխանություն չկա՞». այսպիսի հարցով կարող էր Ասադովի սպառնալիքին պատասխանել մարզի (և ոչ միայն մարզի) հայերի մեծ մասը 1988-ի փետրվարի 20-ին: Դա այն հարցն էր, որ Գ.Բորովիկի «Դիրքորոշում» (*«Позиция»*) հեռուստահաղորդման ժամանակ ակամա տվել է *քեռի Վազգենը*, ինչպես հայազգի սումգայիթցուն ներկայացրել էին հաղորդման հեղինակները:

Անշուշտ, կար մեկ այլ փաստարկ մարզից դուրս բնակվող հայության հարցը շրջանցելու և չհիշատակելու համար: Փաստարկ, որ բաց տեքստով չի արտահայտվել, սակայն հնարավոր է, որ «քաղաքական մեր ենթագիտակցության խորքերից» պայմանավորել է մեր վարքը շարժման այդ փուլում: Արդեն շատ բան կորցրած հայերը փորձում էին փրկել գոնե ինքնավար մարզը: Այսպես թե այնպես, այն ԽՍՀՄ ազգային պետական կառույցի սուբյեկտ, ինքնուրույն վարչաքաղաքական միավոր էր, որ ներկայացված էր ԽՍՀՄ բարձրագույն օրենսդիր իշխանություններում, և թվում էր, թե խնդրի լուծումն ավելի կբարդանա, եթե ընդունված որոշման մեջ խոսք լինի նրա սահմաններից դուրս գտնվող հայկական շրջանների ու հայության մասին: «Գոնե այսքանը փրկենք». այսպիսին է եղել չբարձրաձայնված այն մտայնությունը, որով արցախցիները գնացին դեպի փետրվարյան որոշումը:

Վերջապես կար նաև մեկ այլ հանգամանք, որը բոլորովին այլ կարգի բացատրություն է տալիս ադրբեջանահայության հարցերը շարժման նախապատրաստության և ծավալման առաջին փուլերում շրջանցելու փաստին: Դա այն է, որ պատմությանն անտեղյակ մեր նոր սերունդը կամ գոնե նրա մի մասը, խորհրդային գաղափարախո-

սության և ադրբեջանական քարոզչության ակտիվ ներգործությամբ, համոզված էր, թե բարձրացվող հարցը վերաբերում է միայն մարզին, թե գոյություն ունի ՀԽՍՀ-ի հետ բացառապես ԼՂԻՄ վերամիավորման հարց, թե, վերջապես, օրինաչափ ու օրինական չէ խոսել նրա սահմաններից դուրս գտնվող հայահոծ շրջանների և այլ տեղերում ապրող հայության մասին: Հանրապետության հայության՝ որպես հայ ժողովրդի հատվածի, միասնության ըմբռնումն ակնհայտորեն թուլացել էր: Հետին թվով դա բացատրելի է: Խորհրդային տասնամյակներին Ադր. ԽՍՀ հայությունը, այնուամենայնիվ, հիմնականում հավատ է ընծայել խորհրդային գաղափարախոսությանը, ինտերնացիոնալիզմի և «ժողովուրդների լենինյան բարեկամության» կարգախոսներին և հեռացել ազգային իր նկարագրից: Բաքվի հայության գերակշիռ մեծամասնության խոսակցական լեզուն 1980-ականներին արդեն ռուսերենն էր, իսկ 25%-ը, ինչպես փաստեցին 1970թ. մարդահամարի արդյունքները, իր մայրենի լեզուն համարել է ռուսերենը: Բաքվի հայությունը գաղափարապես այնքան էր սովետականացել, որ նույնիսկ համոզված էր, թե մայրաքաղաքում արդեն ձևավորվել է բնակչության մի ենթաշերտ, որն ազգային պատկանելություն չունի: Այստեղից էլ աշխարհի չեմպիոն, կես հայ, կես հրեա Գարի Կասպարովի «Ո՞վ եք Դուք ազգությամբ» հարցին տված պատասխանը՝ «Ես բաքվեցի եմ»: Եվ քիչ չէին այն բաքվեցիները (ի դեպ, ոչ միայն հայերը), որոնք «համակրանքով էին ընկալել» Կասպարովի պատասխանը:

Իրադարձությունների կտրուկ շրջադարձին անպատրաստ, համայնքային կյանքի ավանդույթները կորցրած և ազգային կյանքի այլ ձև չգտած Բաքվի գրեթե քառորդ միլիոնանոց հայությունը չկարողացավ ինքնապաշտպանության որևէ լուրջ քայլի դիմել: Այնինչ, նույն քաղաքում հայությունը 1905թ. ցույց է տվել ինքնապաշտպանության փայլուն օրինակներ: Այն ծանր փորձությունը, երբ շարժման և հետագայում նաև զինված առճակատման տարիներին հերոսաբար դիմագ-

բավեց Բաքվի հայությունից թվով մեկուկես անգամ քիչ ինքնավար մարզի հայությունը, ցույց է տալիս, թե ինչ նշանակություն ունեն ազգային ոգին և միասնականությունը նման շրջադարձային պահերին:

Բայց թեմայի ծավալման տրամաբանության և ընթացքի տեսակետից մեզ համար կարևոր է այն բանի փաստումը, որ մարզխորհրդի 1988թ. փետրվարի 20-ի հայտնի որոշման մեջ ոչ մի ակնարկ չկար հանրապետության մյուս շրջաններում (մարզի սահմաններից դուրս) ապրող հայության մասին: Եվ այդ լռության մեջ մեր կողմից նշված երեք բացատրությունները կային գուցեն միաժամանակ: Դա՝ փետրվարի 20-ին: Արտահերթ նստաշրջանին հետևած իրադարձությունները շարժման առաջնորդներին հարուստ նյութ տրամադրեցին նորովի «ընթերցելու իրադրությունը» և նոր դիտակետից փոխելու շարժման կարգախոսները:

Նստաշրջանի հաջորդ օրը՝ փետրվարի 21-ին, ԽՄԿԿ Կենտկոմի պաշտոնաթերթ «Պրավդան» ՏԱՍՍ հեռագրական գործակալության մատուցմամբ տպագրեց կենտկոմի քաղբյուրոյի որոշումը «Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած դեպքերի մասին»: Փաստաթղթում ժողպատգամավորների մարզային խորհրդի որոշումը որակված էր որպես «ազգային տարրերի սադրանք»: Կենտրոնի դիրքորոշումը ձևակերպված էր հստակ՝ այն հակասում է ՀԽՍՀ և Ադր. ԽՍՀ աշխատավորության շահերին և վնաս է հասցնում ազգամիջյան հարաբերություններին:

Կենտրոնի բացասական արձագանքը մարզ հասավ որոշման ընդունման օրը: Փետրվարի 22-ին Ստեփանակերտում մարզի ակտիվին ծանոթացնում էին ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյի որոշման հետ: Դա այն օրն էր, երբ քրեականներով հագեցած ամբոխն Աղդամից փորձեց արշավել դեպի Ստեփանակերտ: Նրանց «երթը» խափանվեց Ասկերանի տակ: «Երթի» մասնակից երկու երիտասարդ աղդամցի սպանվեցին: Հաջորդ օրը սպանվածներից մեկի՝ Ստեփանակերտում աշխատող բարեկամից հայտնի դարձավ, որ մարդասպանն ամբո-

խում հայտնված աղդամցիներին անծանոթ հատուկ ծառայություններ-ի աշխատակից էր, որին դեպքից հետո այդտեղից օգնել է շտապ հեռանալ աղդամցի ոստիկանը[29]:

Նույն այդ օրը Ղափանի ադրբեջանցիները, տեղացիների համար անակնկալ ձևով (քաղաքում ազգամիջյան հողի վրա ոչ մի դեպք չէր եղել) իրենց ունեցվածքը մեքենաներին բարձած, լքեցին խաղաղ Ղափանը: Երկու օր հետո նրանք Սումգաիթում սադրիչ ելույթներ էին ունենում և իրենց նկատմամբ հայերի կողմից իբր գործված բռնությունների մասին ստահոդ պատմություններով բորբոքում ամբոխի կրքերը: Մարզային իշխանությունները ԽՍՀՄ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Կատուսևին տեղեկացրին, որ Ասկերանի մոտ երկու ադրբեջանցիների ապանության հետ հայերը ոչ մի կապ չունեն և որ կան այդ փաստերը հաստատող ադրբեջանցի վկաներ: Կուսակցության մարզկոմի նորանշանակ քարտուղար Հ.Պողոսյանը խնդրեց Ա.Կատուսևին անդրադառնալ դրան, եթե առաջիկա օրերին նա հեռուստաելույթ ունենա դեպքերի մասին: Վերջինը խոստացավ, սակայն երեք օր հետո հայկական և ադրբեջանական հեռուստատեսությամբ ունեցած ելույթում, խոսելով Ասկերանի տակ տեղի ունեցած միջադեպի մասին, ոչ միայն մոռացավ շեշտել, որ հայերն այդ սպանության հետ ոչ մի կապ չունեն, այլև հատուկ այնպես ձևակերպեց միտքը, որպեսզի ունկնդիրը կռահի, թե հենց հայերի գործն է դա: Դրան հետևեց սումգաիթյան ոճիրը: Որոշ ժամանակ անց պետության և կուսակցության միահեծան ղեկավարը՝ Միխայիլ Գորբաչովը, պիտի արդարանար, թե խորհրդային զորքերն, իբր, ընդամենը երկու ժամ են ուշացել դեպքերից, չնայած քաղաք մտնելուց հետո էլ այդ զորքերը ոչինչ չեն արել հայ անմեղ ու անպաշտպան մարդկանց ջարդարարներից փրկելու համար: Բաքվում թե՛ քաղաքական ղեկավարությունը, թե՛ արյան ծարավ ամբոխը կենտրոնական իշխանությունների ընդգծված պասիվությու-

[29] Այդ մասին տե՛ս *Александр Василевский,* «Туча в горах» //журнал «Аврора», N10, 1988.

նը հասկացան որպես հայկական ջարդերի պաշտոնական թույլտվություն: Ամռանը «ինտերնացիոնալիզմի մայրաքաղաք» Բաքվում միլիոնանոց ցույցերը պահանջում էին ազատ արձակել «սումգաիթյան հերոսներին»: Մոսկվան անսքող ցինիզմով Սումգաիթը հաղթող ճանաչեց երիտասարդության կոմունիստական դաստիարակության 1988-ի համամիութենական մրցույթում: Դա, ըստ էության, նոր ոճրագործություններ կատարելու յուրօրինակ քաջալերանք էր:

Ադրբեջանի հայ ժողովուրդը Ղարաբաղյան ազատամարտի տարիներին

Ղարաբաղյան շարժման առաջնորդները որոշեցին չշոշափել ԼՂԻՄ-ից դուրս ապրող հայության հարցերը, չնայած հենց ինքնավար մարզն էր հայերի շահերի պաշտպանության երաշխավորը հանրապետության ներսում: Եվ դա՝ այն դեպքում, երբ մարզից դուրս ապրող հայությունն իր թվաքանակով մոտ երեք անգամ գերազանցում էր մարզի հայ ազգաբնակչությանը: «Գոնե մարզը փրկենք». այսպիսին էր տիրապետող մտայնությունը:

Թուրքական դիվանագիտության և քարոզչության տասնամյակների տևողություն ունեցող աշխատանքն անհետ չէր կորել: Ադրբեջանահայության խնդիրներն աստիճանաբար նույնացվում էին ԼՂԻՄ հարցերի հետ և հանգեցվում դրանց՝ հակառակ այն բանի, որ հայերը հանրապետությունում շարունակում էին մնալ ամենանշանակալից ազգային գործոնն ադրբեջանցիներ դարձած կովկասյան թաթարներից հետո: Նրանց ներդրումը հանրապետության տնտեսական և մշակութային կյանքում մնում էր անփոխարինելի:

Թուրքը դա գիտեր: Գիտեր և Մոսկվան: Ահա թե ինչու 1988-ին, ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների մարզխորհրդի փետրվարյան հայտնի որոշումից անմիջապես հետո, թե՛ Մոսկվան, թե՛ Բաքուն իսկույն հիշեցին ադրբեջանահայությանը, հիշեցին, որ Ադր. ԽՍՀ-ն

հիմնված է որպես հայերի և մուսուլմանների միասնական պետական կազմավորում: Պարզվեց, որ խորհրդային տարիներին գործադրած ջանքերին հակառակ՝ Բաքվին այդպես էլ չհաջողվեց իսպառ արժեզրկել և արխիվ նետել Ադր. ԽՍՀ-ի՝ որպես ոչ ազգային խորհրդային հանրապետության մասին իրավաքաղաքական գաղափարը, մանավանդ որ այն զանազան ձևակերպումներով մնում էր շրջանառության մեջ՝ թեկուզ հաճախ ձևի համար: Ինչ վերաբերում է հանրապետության ստեղծման պատմությանը, ապա նրա էջերից այն ջնջել հնարավոր չէր ընդհանրապես:

Առաջին քայլը ձեռնարկեց Մոսկվան: 1988թ. մարտին ԼՂԻՄ սոցիալ-տնտեսական զարգացման մասին ԽՍՀՄ կոմկուսի կենտկոմի և Մինիստրների խորհրդի համատեղ ընդունած որոշման մեջ միանգամայն գիտակցաբար շոշափվում էին ոչ միայն մարզի, այլև նրա սահմաններից դուրս ապրող հայության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման և մշակութային պահանջմունքների բավարարման հարցերը[30]: Մասնավորապես, նախատեսվում էր մարզից դուրս ապրող հայության համար ապահովել հայկական հեռուստածրագրերի ընդունումը Երևանից: Նախատեսվում էր Բաքվում Հայկական պետական դրամատիկական թատրոնի վերաբացումը: Փաստորեն, մարզի համար ընդունված որոշումն ընդգրկում էր գրեթե ողջ հանրապետությունը: 1988-ի հուլիսի 18-ին, երբ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը քննարկում էր հարցը, կոմկուսի գլխավոր քարտուղար Մ.Գորբաչովը բաց տեքստով հայտարարեց, որ մարզի հայության հարցը չի կարելի անջատել ողջ հանրապետության հայության խնդիրներից, չնայած իրենք՝ ղարաբաղցիները (խնդրի լուծումը հեշտացնելու համար), դրանք տարանջատել էին միմյանցից և բարձրացրել էին միայն

[30] Постановление ЦК КПСС и Совета Министров СССР «О мерах по ускорению социально-экономического развития Нагорно-Карабахской автономной области в 1988-1995гг.» от 24 марта 1988 года. Газета «Бакинский рабочий», 29 марта 1988. Որոշման տեքստին կարելի է ծանոթանալ նաև համացանցում: Էլեկտրոնային հասցեն՝ http://constitutions.ru/archives/3068

ինքնավար մարզի հարցը: Մ.Գորբաչովը հրապարակայնորեն այդ խնդիրները միացրեց՝ հայերին դիմելով «Իսկ ի՞նչ անենք Բաքվի ավելի քան երկու հարյուր հազարանոց հայության հետ» հարցով:

Դրանից մի քանի օր առաջ, հուլիսի 13-ին, Բաքուն նույն քայլը կատարել էր ավելի հստակ բանաձևումով: Ադր. ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունը, քննարկելով ժողովրդական պատգամավորների ԼՂԻՄ մարզային խորհրդի որոշումը, այն անընդունելի համարեց՝ հիմնավորելով, թե այն հակասում է *հանրապետության ադրբեջանցի և հայ ազգաբնակչության շահերին:* Ասել կուզի, թե ինքնավար մարզի պահանջը, ըստ Ադր. ԽՍՀ ԳԽ նախագահության, հակասում է *ողջ հանրապետության* հայ ազգաբնակչության շահերին: Բաքուն նույնպես վերադարձավ Ադր. ԽՍՀ՝ որպես հայերի և մուսուլմանների միասնական պետության ստեղծման ելակետային դրույթին (այն տարբերությամբ, որ մի քանի տասնամյակ անց մուսուլմանները «դարձել» էին ադրբեջանցիներ):

Այն, որ Բաքուն վերահաս էթնոքաղաքական հակամարտության մեջ ողջ ադրբեջանահայությունն էր համարում իր գլխավոր հակառակորդը, երևաց Ստեփանակերտում ԼՂԻՄ մարզխորհրդի հայտնի որոշման ընդունումից անմիջապես հետո: Փետրվարի 26-ին հայկական ջարդեր սկսվեցին հանրապետության մյուս ծայրում՝ Սումգայիթում: Հետո դրանց ալիքը ծավալվեց ողջ հանրապետության տարածքով: Մարզից դուրս ապրող հայությունը Ղարաբաղում սկսված շարժման մեջ որևէ ձևով ընդգրկված չէր: Ստեփանակերտը խնդիրը բարձրացրել էր որպես ԽՍՀՄ ազգային-պետական կառուցվածքի երկու սուբյեկտներին՝ միութենական հանրապետությանը և ինքնավար մարզին վերաբերող հարց: Ակնհայտ էր, որ Ստեփանակերտի բարձրացրած հարցը ԼՂԻՄ-ից դուրս ապրող հայերին չէր վերաբերում: Բայց նրանց կոտորում էին որպես հայերի: Դա մինչ օրս որևէ գնահատական չստացած, միջազգայնորեն չդատապարտված ցեղասպանություն է:

Ղարաբաղյան հակամարտության ընթացքում ադրբեջանահայության կրած կորուստները միայն ազգային ինքնակազմակերպման հաստատությունների բացակայությամբ կարելի է բացատրել: Մենք շարժման հորձանուտը մտանք՝ չունենալով նման հաստատություններ, և մեր անպատրաստության ամենածանր հետևանքները բաժին հասան ադրբեջանահայությանը: Գուցեև այն պատճառով, որ այն մեր ամենաթույլ տեղն էր:

Ադրբեջանահայության մեծ մասը չհասցրեց նույնիսկ բնակարանները փոխանակել կամ դուրս բերել իր ինչքը: Այնինչ, հայաստանաբնակ ադրբեջանցիները նույնիսկ տների պատուհաններն ու անասունները դուրս տարան: Մինչև ԽՍՀՄ լուծարումը, փաստորեն, ողջ Ադր. ԽՍՀ հայությունը, բացառությամբ ԼՂԻՄ-ի և հարակից Շահումյանի շրջանի, զանգվածային բռնությունների արդյունքում տեղահանվել ու դուրս էր մղվել իր բնակության վայրերից՝ չստանալով որևէ նյութական կամ բարոյական փոխհատուցում: Իր արդյունքը տվեց նաև ադրբեջանահայության խնդիրը մարզի խնդրին հանգեցնելու՝ Բաքվի կողմից տասնամյակներ շարունակ առաջ տարվող գիծը: 1988թ. հուլիսի 17-ին հանրապետության Գերագույն խորհրդի նիստը վերաձևակերպեց ԳԽ նախագահության երեք օր առաջ ընդունած որոշումը՝ արձանագրելով, որ ԼՂԻՄ ժողպատգամավորների մարզխորհրդի խնդրանքն անընդունելի է, «քանի որ այն հակասում է մարզի հայ, ադրբեջանցի, ռուս և մյուս ազգությունների շահերին»: Խնդիրն աշխարհագրական, քաղաքական և իրավական իմաստներով նեղացվեց, ադրբեջանահայությունը դուրս թողնվեց խնդրի համատեքստից և հանգեցվեց մարզին:

Խնդրի նեղացման վերջին հանգրվանն այն որպես ԼՂԻՄ երկու ազգային համայնքների՝ հայերի և ադրբեջանցիների վեճ ներկայացնելը պիտի լիներ, մի բան, որն այսօր անում են ադրբեջանական դիվանագիտությունն ու քարոզչամեքենան:

Շարժման հենց սկզբում ադրբեջանական կողմին հաջողվեց եռանդուն քարոզչությամբ հասնել այն բանին, որ ոչ միայն ուրիշների, այլև նույնիսկ մեր կողմից հավասարության նշան դրվեց հայաստանաբնակ ադրբեջանցիների և Ադրբեջանի հայ ժողովրդի միջև: Մենք հեշտությամբ անտեսեցինք ոչ միայն այն, որ Ադր. ԽՍՀ-ում ապրող հայերի քանակը երեք անգամ գերազանցում էր ՀԽՍՀ-ում բնակվող ադրբեջանցիների թիվը, այլև հավասարության նշան դրեցինք նրանց իրավական կարգավիճակների միջև այն դեպքում, երբ ադրբեջանցիները ՀԽՍՀ-ում ազգային փոքրամասնություն էին միայն, իսկ հայերը՝ Ադր. ԽՍՀ հիմնադիր ժողովուրդներից մեկը: Մենք հավասարության նշան դրեցինք կողմերի միջև, որոնցից մեկն անսքող իրագործված ցեղասպանության զոհ էր:

ԽՍՀՄ լուծարումից հետո այդ հավասարությունն աստիճանաբար ընդունեց բացահայտ քաղաքական անհավասարության տեսք: Բաքուն հասավ այն բանին, որ հակամարտության քաղաքական կարգավորման՝ ԵԱՀԿ հովանու տակ անցկացվող գործընթացներում, իսպառ մոռացության տալով ադրբեջանահայությանը, սկսեցին տեղ տալ Լեռնային Ղարաբաղի ադրբեջանական համայնքին, որի «ներկայացուցիչ» Բախմանովը ադրբեջանական պատվիրակության կազմում երկար ժամանակ մասնակցում էր բանակցություններին:

Էթնոքաղաքական հակամարտության աշխարհագրության վերաձևումները

Ի՞նչ նպատակ էր հետապնդում թուրքը, երբ հուլիսի 13-ին ընդունած որոշման առանցքային ձևակերպումը (Ադր. ԽՍՀ ԳԽ նախագահությունը ժողպատգամավորների մարզային խորհրդի որոշումն «անընդունելի է համարում, քանի որ նրա իրագործումը հակասում է հանրապետության ադրբեջանցի և հայ ազգաբնակչության շահերին»)[31] հուլիսի 17-ին փոխարինեց «Ադր. ԽՍՀ ԳԽ նախագահությունն այն

[31] Газета «Бакинский рабочий», 14 июля 1988г.

անընդունելի է համարում, քանի որ այն հակասում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի հայ, ադրբեջանցի, ռուս և այլ ազգության պատկանող բնակչության շահերին» ձևակերպումով[32]:

Քաղաքական հաշվարկը թափանցիկ ու հեշտ ընթռնելի էր: Այն նեղացնում-փոքրացնում էր հակամարտության աշխարհագրական և դրա հետ մեկտեղ՝ քաղաքական սահմանները: Այն բանից հետո, երբ հաջողվեց հակամարտության պատկերից ադրբեջանահայության անտեսումով հակամարտության աղբյուրը «տեղավորել» մարզում, նույն գծի վրա շուտով շրջանառության մեջ դրվեց մեկ այլ բանաձև, ըստ որի՝ հակամարտության իրական կողմերը Լեռնային Ղարաբաղի հայկական և ադրբեջանական համայնքներն են: Սրանք կոնֆլիկտի տարածքը սահմանափակելու, հայերի տեղը նրանում աշխարհագրորեն նեղացնելու և մարզի նկատմամբ ադրբեջանական համայնքի հավակնությունները հիմնավորելու քայլեր էին, որ դարասկզբին Թուրքիայի կողմից տարածաշրջան ներմուծված քաղաքականության շարունակությունն էր: Ինչպես ասվեց, 1917-1920թթ. Արևելյան Անդրկովկասում թափ առած հակամարտությունը *ողջ տարածաշրջանի* ազգային-պետական կառուցվածքի շուրջ ընթացող էթնոքաղաքական հակամարտություն էր: Եվ այն, որ Բաքուն ու գրեթե ողջ նահանգը գտնվում էին հայերի պաշտպանությունը վայելող Բաքվի կոմունայի իշխանության ներքո, խոսում է կողմերի ռազմաքաղաքական ուժերի՝ հօգուտ հայերի ստեղծված հարաբերակցության մասին: Եվ հայտնի չէ, թե ինչ պետություն կձևավորվեր Արևելյան Անդրկովկասում, եթե Նուրի փաշայի գլխավորած թուրքական զորքերը չգրավեին Բաքուն և իշխանությունը տեղում չտային թուրքացող կովկասյան թաթարին: Միայն դրանից հետո թուրքը մեջտեղ հանեց *Ղարաբաղյան հարցը*: «Խնդիր կա միայն Ղարաբաղում, իսկ Արևելյան Անդրկովկասի՝ Ղարաբաղից դուրս գտնվող շրջաններում հայ-թաթարական հարց չկա, քանի որ այն արդեն գրավել ենք: Կա Ղարա-

[32] Газета «Бакинский рабочий», 18 июля 1988г.

բաղյան հարց, քանի դեռ այն չենք գրավել». այսպես էր հասկանում թուրքը՝ շրջանառության մեջ դնելով *Ղարաբաղյան հարցը*:

Սակայն Արևելյան Անդրկովկասի խորհրդայնացումն ի հայտ բերեց, որ նույնիսկ տասնյակ հայկական և ուդիական գյուղերի բնաջնջումից ու Շուշիի հրկիզումից հետո հայերը մնում են երկրամասի ազգային դեմքը բնութագրող էթնիկ խմբերից մեկը: Այստեղից էլ ոչ ազգային, ինտերնացիոնալ Ադր. ԽՍՀ ստեղծելու գաղափարի բնական լինելը 1920-ական թթ.: Բայց թուրքը, որ մտքում ուներ հայերին տարածաշրջանից դուրս մղելու միտքը, խորհրդային շրջանում ևս իր ազգային օրակարգից չհանեց հայերի տեղը երկրատարածքում աշխարհագրորեն նեղացնելու քաղաքականությունը: Արդեն խորհրդային տարիներին ինտերնացիոնալիզմի քողի տակ, ոչ առանց բոլշևիկյան Մոսկվայի հովանավորության, Ղարաբաղյան խնդիրն ավելի նեղացվեց և հանգեցվեց Լեռնային Ղարաբաղի խնդրին: Դրան հետևեց հայկական ինքնավար մարզը Լեռնային Ղարաբաղի մի մասի վրա հիմնելու քայլը՝ այս անգամ արդեն Կովբյուրոյի առանց այն էլ ապօրինի որոշման խախտումով:

1988-ին, այն բանից հետո, երբ խնդիրը վերաբորբոքվեց և Մոսկվան դրան տվեց «իրադարձությունները Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջ» բանաձևումը, Բաքուն ընդամենը մեկ անգամ վրիպեց հակամարտության բնույթի ձևակերպման հարցում: Խոսքը 1988-ի հուլիսի 13-ի Ադր. ԽՍՀ ԳԽ նախագահության վերը հիշատակված որոշման մասին է, որտեղ խոսվում է ողջ հանրապետության հայության՝ որպես կոնֆլիկտի հնարավոր կողմի մասին: Դա վրիպում էր, որն ուղղվեց երեք օր անց Ադր. ԽՍՀ ԳԽ որոշման մեջ, որում խնդիրը ներկայացվեց ԼՂԻՄ-ի նկատմամբ իբր հավասար իրավունքներ ունեցող հայկական և ադրբեջանական համայնքների վեճի ձևով: Այսօր Բաքվից աշխարհին լայնորեն հրամցվող այդ կեղծ դրույթը նույնպես միջանկյալ մի բան է դիտվում: Վերջնական նպատակը, որին միտված

են Բաքվի դիվանագիտական և քարոզչական քայլերը, այլևս չի քողարկվում: Եվ դա «դրսում ու ներսում» հանրային գիտակցության մեջ այն մտքի սերմանումն է, թե, իբր, Լեռնային Ղարաբաղը պատմականորեն ադրբեջանցիներին պատկանող տարածք է և, իբր, ադրբեջանցիները 19-րդ դարում (երբ նման անունով ազգ կամ ժողովուրդ աշխարհին հայտնի չէր) մեծահոգաբար հյուրընկալել են տարբեր տեղերից այստեղ ապաստանած հալածական հայերին:

20-րդ դարի ընթացքում թուրքի կողմից Արևելյան Անդրկովկասից հայկական գործոնը դուրս մղելու, վեճի առարկան նեղացնելու պատմության համառոտագրությունը կունենա հետևյալ տեսքը:

1917թ. նոյեմբեր – 1918թ. սեպտեմբեր: Կովկասյան թաթարների և հայերի վեճի առարկան ողջ Արևելյան Անդրկովկասն է: Հայերի առավելությունը քաղաքական դաշտում ակնհայտ էր: Նրանք իշխող դիրքեր ունեին Բաքվի կոմունայում, որը վերահսկում էր Բաքվի նահանգի մեծ մասը:

1918թ. սեպտեմբեր – 1920թ. ապրիլ: Թուրքական կանոնավոր զորքերի օգնությամբ Բաքվում քաղաքական իշխանությանը տիրացած թուրք-թաթարները հավակնություններ են ներկայացնում իրենց կողմից չվերահսկվող հսկայական տարածքների (Բաքվից մինչև Բաթում), այդ թվում և Լեռնային Ղարաբաղի նկատմամբ, որը գտնվում էր տեղի հայկական լեգիտիմ իշխանությունների կառավարման ներքո: Ազգերի լիգան օրինական չճանաչեց մուսավաթական Ադրբեջանի այդ հավակնությունները: Թուրք-թաթարների և հայերի միջև ամբողջ Արևելյան Անդրկովկասի շուրջ վեճը շրջանառության մեջ դրվեց «Ղարաբաղի հարցի» տեսքով: Արևելյան Անդրկովկասի հայկական մյուս տարածքների հետ թուրքերն իրենց խնդիրը լուծած էին համարում:

1920թ. - 1988թ.: 1920թ. Խորհրդային Ռուսաստանի 11-րդ կարմիր բանակի կողմից հիմնվում է Ադր. ԽՍՀ-ը (Ադրբեջանական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը)՝ որպես ոչ ազգային, ար-

տազգային (կամ ինչպես հետագայում անվանվեց՝ ինտերնացիոնալ) խորհրդային հանրապետություն: Արտազգային Ադր. ԽՍՀ-ը, որտեղ իշխանությունը հայտնվեց թուրքացած կովկասյան թաթարի ձեռքում, հավակնություններ ներկայացրեց Խորհրդային Հայաստանի տարածքների, այդ թվում և Լեռնային Ղարաբաղի նկատմամբ: «Լեռնային Ղարաբաղի» հարցը շրջանառության մեջ մտավ որպես Ադր. ԽՍՀ-ի և ՀԽՍՀ-ի միջև ծագած տարածքային վեճ: Կովբյուրոն իր չընդունած, բայց գործադրած որոշմամբ Լեռնային Ղարաբաղը մտցնում է Ադր. ԽՍՀ սահմանները՝ նրան մարզային լայն ինքնավարություն տալու պայմանով[33]: Բաքուն, ի խախտումն այդ առանց այն էլ ապօրինի որոշման, որով նախատեսվում էր մարզային լայն ինքնավարություն տալ ողջ Լեռնային Ղարաբաղին[34], 1923-ին ինքնավար մարզը հիմնում է նրա մի մասի վրա: Խնդիրն աշխարհագրորեն նեղացնելու այդ քայլը ստացավ հետևյալ ձևակերպումը՝ «Լեռնային Ղարաբաղի հայկական մասից կազմել ինքնավար մարզ»: Փաստաթղթերն ընդունված են ռուսերեն լեզվով և հրաշալի են արտացոլում Կովբյուրոյի որոշման խախտումը: Կովբյուրոն հանձնարարել էր Բաքվին հիմնել *Автономную область Нагорного Карабаха (АОНК),* ինչը նշանակում էր, որ ողջ Լեռնային Ղարաբաղին պիտի տրվեր լայն մարզային ինքնավարություն[35]: ԼՂԻՄ-ը իրականում հիմնվեց Լեռնային Ղարաբաղի մեկ

[33] Из протокола заседания пленума Кавбюро ЦК РКП (б) от 5 июля 1921г., «Вестник архивов Армении», 1989, N 2, док. N 13, стр. 77-78.

[34] Օտարելով Լեռնային Ղարաբաղ-Արցախը Խորհրդային Հայաստանից՝ Կովբյուրոն ամենայն հավանականությամբ Ստալինի ձեռքով գրված որոշման մեջ արձանագրեց, որ Արևելյան Անդրկովկասի ազգային-պետական կառուցվածքի շուրջ վեճի կողմերը հայերն ու մուսուլմաններն են: Այդ են վկայում որոշման քաղաքական հիմնավորմանը վերաբերող փաստաթղթի առաջին բառերը՝ «Исходя из необходимости национального мира между мусульманами и армянами».

[35] *АОНК* և *НКАО* անվանումների տրամագծորեն հակադիր և կեղծ մեկնաբանություն է տալիս Ալեքսանդր Սկիբիցին որպես *«Известия»* թերթի հավելված լույս տեսնող *«Союз»* շաբաթաթերթի 1991-ի թիվ 7-ում զետեղված հոդվածում: Հօգուտ Բաքվի շրջելով այդ անվանումների իմաստները, հակասելով աշխարհագրական ու պատմական բնույթի ակնհայտ փաստերին և ռուսերեն լեզվի կանոններին՝ նա պնդում է, թե, իբր, հենց *НКАО* անվանումն է ցույց տալիս, որ մարզի սահմաններում ընդգրկված է ողջ աշխարհագրական Լեռնային Ղարաբաղը: Պետք է նկատել, որ մեր որոշ վերլուծաբաններ ընկել են այդ «լեզվական ծուղակը»:

քառորդի վրա: Չբավարարվելով դրանով՝ 1928թ., ինչպես ցույց են տալիս այդ տարիներին հրատարակված քարտեզները, ինքնավար մարզից անջատեցին Շահումյանի շրջանը[36]: Մարզի *Автономная область Нагорного Карабаха (АОНК)* անվանումը, այնուամենայնիվ, պահպանվեց մինչև 1936թ. և փոխվեց «ստալինյան սահմանադրության» ընդունման կապակցությամբ: *АОНК*-ը դարձավ *НКАО (Нагорно-Карабахская автономная область)*՝ անվանման մեջ իսկ արտացոլելով այն հողերի թալանը, որոնք պետք է լինեին մարզի սահմաններում:

1988թ.: Բաքուն որոշում է նորից աշխարհագրորեն նեղացնել հարցը: Մոռացության տալով հենց իր ընդունած դեկրետի այն ձևակերպումը, ըստ որի՝ մարզը հիմնվում է Լեռնային Ղարաբաղի հայկական մասում, շրջանառության մեջ է դրվում հակամարտության մի պատկեր, որով այն ներկայացվում է որպես մարզի երկու համայնքների (հայերի և ադրբեջանցիների) վեճ:

Հետխորհրդային շրջան: Նորավարտ 20-րդ դարի վերջին տասնամյակում և մեր օրերում Բաքուն աշխատում է նեղացնել Արևելյան Անդրկովկասում հայերի և թուրքերի էթնոքաղաքական հակամարտության աշխարհագրությունը և այն ներկայացնել որպես նախկին մարզի ադրբեջանցի և հայ համայնքների վեճ, և դա նրան կարծես հաջողվում է: Մի բան, որ բացատրվում է կրավորական մեր կեցվածքով:

[36] 1930թ. մարզի Հադրութի շրջանից հօգուտ հարևան Կարյագինոյի շրջանի (հետագայում՝ Ֆիզուլու շրջան) պոկեցին Հողեր գյուղը: Այդ տարիներին Մոսկվայի հովանավորությամբ Բաքվի կողմից իրագործվող հայկական հողերի թալանը հաճախ նույնիսկ փաստաթղթային ձևակերպումներ չէր ստանում: Իրավունքը փոխարինված էր Մոսկվայում հրատարակվող քարտեզներով: Այսպես, օրինակ, ՀԽՍՀ սահմանային Արծվաշեն գյուղը տարածքներ պոկելու այդ կամայականությունների շնորհիվ է հետագա քարտեզներում դարձել Հայկական ԽՍՀ-ից կտրված առանձնատարածք (անկլավ): Այսօր այն բռնազավթված է: Ընդհանուր առմամբ, խորհրդային տարիներին տարբեր «հիմնավորումներով» առանց այն էլ սակավահող Խորհրդային Հայաստանի 14 530 հա լավագույն հողատարածքները տրվել են ադրբեջանական տնտեսությունների օգտագործմանը: Երկար ու համառ ջանքերի շնորհիվ հաջողվեց աստիճանաբար հետ բերել դրանք: Հողատարածքների «հայրենադարձությունն» ավարտվեց միայն 1988-ին: Խորհրդային տարիների քարտեզները, այնուամենայնիվ, վկայում են, որ մինչև 30-ական թվականները Խորհրդային Հայաստանն ընդհանուր սահման է ունեցել ԼՂԻՄ-ի հետ: Տարածքների բզկտումը և ապօրինի սեփականումն իրագործվել են նաև ԼՂԻՄ-ի դեպքում, որոնց արդյունքում մարզը կորցրել է ընդհանուր սահմանը ՀԽՍՀ-ի հետ և վերածվել անկլավի:

Ադրբեջանահայության թեման Մինսկի խմբի 1998թ. ընդհանուր պետության մասին առաջարկում

Ադրբեջանահայության թեման մեջտեղ բերելու հաջորդ առիթը մեզ տրամադրեց ինքը՝ Մինսկի խմբի համանախագահությունը, երբ 1998-ին կողմերին ներկայացրեց *ընդհանուր պետության* մասին առաջարկը: Բաքուն իսկույն, գրեթե առանց մտածելու, մերժեց այն, քանի որ առաջարկի մեջ տեսավ 1920-ական թթ. իրավաքաղաքական իրողություններին՝ մուսուլմանների և հայերի «միասնական պետական միության» գաղափարին վերադառնալու թափանցիկ ակնարկը: ՀՀ և ԼՂՀ իշխանությունները պատրաստակամություն հայտնեցին առաջարկն ընդունել որպես հետագա բանակցությունների հիմք: Եվ միայն այդքանը: Այնինչ առիթը բացառիկ էր Բաքվի վճռական մերժման դրդապատճառները Մինսկի խմբին և աշխարհին ներկայացնելու համար: *Պահն էր հնչեղություն տալու այն փաստերին, որ Ադր. ԽՍՀ-ն հիմնվել է հենց որպես մուսուլմանների և հայերի ընդհանուր պետություն, որ Արևելյան Անդրկովկասի հայությունն այդ հանրապետության հիմնադիր ժողովուրդներից մեկն է, որ նա երկրամասի քաղաքական, տնտեսական և մշակութային պատմության կերտողներից է:* Ամենահարմար պահն էր հնչեցնելու, որ Խորհրդային Ադրբեջանում ցեղասպանվել է այդ հանրապետության հիմնադիր, պետականակիր ժողովուրդներից մեկը, որը չի ստացել որևէ քաղաքական, նյութական կամ նույնիսկ բարոյական փոխհատուցում և որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը մեր ժողովրդի այդ հատվածի ապագայի համար պատմական պատասխանատվություն է կրում: Մենք ոչինչ չարեցինք: Սահմանափակվեցինք ԵԱՀԿ Մինսկի խմբի՝ *ընդհանուր պետության* մասին արված առաջարկը Բաքվի կողմից մերժելու փաստը որպես մեր դիվանագիտության հաջողություն ներկայացնելով, քանի որ դա վկայում է հայկական կողմերի կառուցողական դիրքորոշման մասին. անընդհատ դա էինք ընդգծում և չէինք թաքցնում մեր գոհու-

նակությունն այդ առթիվ: Այս կերպ Բաքվի մերժումը նրա ապակառուցողական դիրքը շահարկելու առիթ դարձավ ընդամենը: Մենք չբարձրաձայնեցինք մերժման իրական քաղաքական և իրավական շարժառիթները: Տասնհինգ տարուց ավելի է, ինչ ԵԱՀԿ Մինսկի խումբը ներկայացրել է *ընդհանուր պետության* մասին իր առաջարկը: Դրանից հետո նա բանակցային սեղանին նոր ամփոփ առաջարկ չի դրել: Եվ այդ ամբողջ ընթացքում մենք այդ փաստաթուղթը չենք կարողանում առիթ դարձնել ադրբեջանահայության թեմային անդրադառնալու, բանակցային գործընթացի շուրջ ձևավորված տեղեկատվական միջավայրը մեր օգտին շրջելու համար: Ոչինչ չենք արել:

Ոչինչ չենք արել նույնիսկ այն բանից հետո, երբ ադրբեջանահայության մի շարք հայրենակցական միություններ նամակով դիմեցին ՀՀ և ԼՂՀ իշխանություններին իրենց շահերը բանակցություններում, միջազգային ֆորումներում պաշտպանելու խնդրանքով ու պահանջով:

Կայացող, բայց դեռևս չկայացած շրջադարձ մեր քաղաքական գիտակցության մեջ

Առավելագույնը, որ արվեց վերջին տարիներին, Թուֆենկյան բարեգործական հիմնադրամի և *Որակի համընդհանուր ղեկավարման աջակցություն* հասարակական կազմակերպության հովանավորությամբ 2005-ին Երևանում «Ադրբեջանահայություն: Կորսված հայրենիք: Համարժեք փոխհատուցում» կոնֆերանսի կազմակերպումն էր: Կոնֆերանսի նյութերը նույն վերտառությամբ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով լույս տեսան 2006թ.: Մինչ այդ Ա.Սախարովի անվան հինադրամը փաստաթղթային համապատասխան հիմնավորումներով փախստականության հարցերով զբաղվող ՄԱԿ հանձնաժողով էր ներկայացրել Հայաստանի Հանրապետությունում հանգրվանած այն փախստականների ցուցակը, որոնք ոչ մի փոխհատուցում չէին ստացել: 2004-ին նույնպիսի ակցիա էր կազմակերպել ԼՂՀ նախկին արտգործնախարար Արման Մելիքյանը: Բայց ոչ առաջին և

ոչ երկրորդ դեպքում հետևողականություն չի ցուցաբերվել, և բացառված չէ, որ այդ փաստաթղթերը ՄԱԿ ժնևյան գրասենյակի դարակներում ինչ-որ ժամանակ մնալուց հետո դառնան իրենց հրատապությունը կորցրած արխիվային փաստաթղթեր: 2009-ի օգոստոսին նման մի ակտ իրագործվեց ԱՄՆ-ում: ԱՄՆ կոնգրեսին ներկայացվեց 1988-1994թթ. Ադր. ԽՍՀ-ից զանգվածային բռնությունների զոհ հայության մասին մի տեղեկանք: Թերահավատ եմ նաև այդ նախաձեռնության հնարավոր հետևանքների հարցում և դրա բացատրությունը մեր անհետևողականության մեջ եմ տեսնում:

Ադրբեջանահայության նկատմամբ իրագործված ոճրագործության քաղաքական և իրավական գնահատումը և իր կորուստների համար նրան փոխհատուցում տալու խնդիրը մեկ գիտական կոնֆերանսով կամ մեկ տեղեկանքով լուծելու խնդիր չեն: Անհրաժեշտ է հետևողական և համակարգված քաղաքականություն, որն առանց պետական աջակցության և արհեստավարժ քաղաքական գործունեության դարձյալ դատապարտված կլինի անհաջողության:

Սկզբունքային կարևորություն եմ տալիս այն բանին, որ «խնդրի բեռը» և ադրբեջանահայության ճակատագրի համար պատմական պատասխանատվությունն իր վրա վերցնի Ստեփանակերտը, քանի որ քաղաքական, տարածքային և նյութական փոխհատուցման հարցն անմիջական առնչություններ ունի հենց ԼՂՀ կայացման, նրա անկախության ճանաչման խնդրի հետ:

Հայաստանի Հանրապետությունում հանգրվանած ադրբեջանահայ փախստականների հարցում մեր պաշտոնական քաղաքականությունը գործադիր իշխանության մակարդակով իրագործվում է Փախստականների կոմիտեի (այժմ՝ Միգրացիայի պետական ծառայություն) կողմից, որը վերջին տարիներին ջանադրաբար առաջ տարավ հասարակության մեջ նրանց ինտեգրման, նրանց, այսպես կոչված, նատուրալիզացման քաղաքականությունը, ինչպես դա անվանվում է դրամաշնորհների միջոցով ներդրվող օտարալեզու ծրագրե-

րում: Անկասկած, Հայաստանի Հանրապետությունում ադրբեջանահայերը պետք է «իրենց զգան ինչպես տանը»: Սակայն այդ ինտեգրումը չպետք է արվի նրանց պահանջատիրական իրավունքներն օրակարգից հանելու հաշվին: Եթե այդ պահանջատիրության մոռացությունը Հայաստանի Հանրապետությունում ուղեկցվում է ադրբեջանահայերի ինտեգրմամբ, ապա դրսում՝ Ռուսաստանում, եվրոպական երկրներում, Միացյալ Նահանգներում դա կազմալուծում ու բարոյալքում է նրանց, արագացնում ուծացման գործընթացը:

Այն, թե կոնկրետ ինչ կազմակերպական տեխնոլոգիաներ կարելի է գործողության մեջ դնել ադրբեջանահայության ինքնակազմակերպման համար, ինքնուրույն քննության խնդիր է, ինչը դուրս է սույն աշխատանքի նպատակներից: Մեր խնդիրն էր ցույց տալ, որ՝

- ադրբեջանահայությունը Արևելյան Անդրկովկասում դեռևս 20-րդ դարի սկզբին բորբոքված և, ըստ էության, ողջ դարի ընթացքում տարբեր ձևեր ընդունած հայ-թաթարական (նույնն է թե՝ հայ-թուրքական) հակամարտության կողմերից մեկն է եղել մշտապես;
- ադրբեջանահայությունն այն հակամարտության հիմնական զոհն է, որ տարածաշրջանի պատմության մեջ մտավ «Ղարաբաղյան հակամարտություն» անվանմամբ;
- մեր ժողովրդի այդ հատվածը չի ստացել ոչ բարոյական, ոչ նյութական և ոչ էլ քաղաքական որևէ փոխհատուցում;
- մենք ակտիվորեն մոռացության ենք տալիս մեր ժողովրդի այդ հատվածի կորուստներն ու զրկանքները և նրա օրինական պահանջներն այն դեպքում, երբ Բաքուն անընդհատ միջազգային հանրության առջև բարձրացնում է իր կեղծ փախստականության հարցը, երբ Մինսկի խմբի առաջարկություններում նախատեսվում է ադրբեջանցի «փախստականների» (իրականում Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի և հետագայում նաև ԼՂՀ շրջափակմանն ու նրա դեմ սանձազերծած պատերազմի մասնակիցների) վերադարձը «գրավյալ տարածքներ», և ոչ մի խոսք

չի ասվում զանգվածային ջարդերով իրենց բնակության հազարամյա վայրերից դուրս մղված ադրբեջանահայության մասին;

- մենք ինքներս հավասարության նշան ենք դրել ցեղասպանված մեր ազգի այդ հատվածի ու այն ադրբեջանցիների միջև, ովքեր ակտիվորեն մասնակցել են նրա դեմ (Արցախում և նրա սահմաններից դուրս) կազմակերպված ջարդերին և վայրագություններին:

Մի խոսքով, մենք ինքներս ենք ադրբեջանահայությանը դուրս թողել Ղարաբաղյան հակամարտության կարգավորման միջազգային քաղաքական գործընթացներից, երբ կարող էինք նրան դարձնել հակամարտության կարգավորման վճռորոշ գործոններից մեկը:

Պարզվում է, սակայն, որ ադրբեջանահայության հարցն անմիջական առնչություններ ունի ոչ միայն Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հետ: Այն Հայոց ցեղասպանության միջազգային քաղաքական հարցի բաղկացուցիչ մասն է, և նրա արծարծումը կարող է վճռորոշ նշանակություն ունենալ ցեղասպանության միջազգային ճանաչման և դրա հետևանքների հաղթահարման խնդրում:

Ադրբեջանահայությունը՝ հակամարտության չանվանված զոհ

Զանգվածային բռնություններից փրկված ադրբեջանահայ փախստականները 1988-90-ական թթ. գլխավորապես հանգրվանում էին Խորհրդային Հայաստանում: Սակայն շուտով ակնհայտ դարձավ, որ երկրաշարժից ավերված հանրապետությունն ուղղակի ի վիճակի չէ աշխատանքով ու հացով ապահովել հարյուր հազարավոր փախստականների: Կար մեկ այլ դժվարություն՝ կապված այն բանի հետ, որ քաղաքներից (Բաքվից, Գանձակից, Շամախուց, Մինգեչաուրից և այլն) տեղահանված հայերը հիմնականում չկարողացան ըստ մասնագիտության աշխատանք գտնել գյուղական վայրերում: Մի հսկայական զանգվածի համար արագ հարմարման խոչընդոտ դարձավ հայերենին չտիրապե-

տելը: Սկսվեց միգրացիոն տեղաշարժերի մի նոր ալիք: Այս անգամ՝ դեպի Ռուսաստան և հեռավոր արտասահմանի երկրներ:

Նախկին Ադր. ԽՍՀ իրենց հազարամյա բնակության վայրերից բռնությամբ դուրս մղված ավելի քան երկու հարյուր հազար հայեր այսօր ցրիվ կամ փոքրիկ համայնքներով բնակվում են ԱՊՀ, Եվրոպայի և ամերիկյան մայրցամաքի տարբեր երկրներում: Մեծ մասը, բնականաբար, Ռուսաստանի Դաշնությունում:

Ոչ ԼՂՀ և ոչ էլ ՀՀ իշխանությունները *Ղարաբաղյան կոնֆլիկտ* անվամբ հայտնի դարձած հակամարտության զոհը դարձած մեր ժողովրդի այդ հատվածի շահերի պաշտպանությանն ուղղված որևէ քաղաքականություն չմշակեցին՝ դրա անհրաժեշտության ակնհայտության պարագայում: Ոչ փախստականների դիմումները, ոչ նույնիսկ Բաքվի կողմից Լեռնային Ղարաբաղի «ադրբեջանական համայնքի» կեղծ խնդրի շահարկումը փաստարկ չդարձան դրա համար: Երևույթի միակ բացատրությունն այն է, որ մենք չունեցանք ռազմավարության մշակված և որդեգրված ամբողջական ծրագիր, որի համատեքստում պետք է լուծումներ ստանային մեր ժողովրդի ստվար այդ հատվածի հետ կապված հարցերը: Չունենք: Դրա համար էլ մենք մնացել ենք 1987-88-ի մտայնությունների շրջանակում, երբ ողջ Ադր. ԽՍՀ հայության հետ կապված հարցերը հանգեցնում ենք նախկին ԼՂԻՄ կամ լավագույն դեպքում՝ ԼՂՀ խնդիրներին:

Նույնիսկ ԽՍՀՄ լուծարումից հետո, երբ մեզ պարտադրված պատերազմի ընթացքում ազատագրեցինք Լեռնային Ղարաբաղի այն շրջանները, որոնք Կովբյուրոյի որոշման համաձայն՝ պետք է լինեին ինքնավար մարզի սահմաններում, մեր արտաքին քաղաքականությունն այդ տարածքները չկապեց առանց որևէ փոխհատուցման՝ իր բնիկ հողերից բռնի տեղահանված ադրբեջանահայության հետ: Ավելին: Երբեմն «հաշվետվություններ» էինք տալիս ԵՀԱԿ Մինսկի խմբի համանախագահներին այն մասին, որ «անվտանգության գոտի» անվանված տարածքներն ադրբեջանահայ փախստականներով չի բնակեցվում: Ին-

չո՞ւ: Պարզվում է, որ հարցն ավելի խոր արմատներ ունի մեր ազգային քաղաքական մտածողության մեջ: Պարզվում է, որ մեր կողմից այս հոդվածում անընդհատ օգտագործվող *ադրբեջանահայության* հասկացությունն ընդհանրապես չկար մեր քաղաքական բառապաշարում: Որքան էլ տարօրինակ է հնչում, փաստ է, սակայն, որ *ադրբեջանահայություն* հասկացություն մենք ընդհանրապես չունեինք: Ունեինք (և հիմա էլ ունենք) *վիրահայություն*, *ռուսահայություն*, *հնդկահայություն*, *ֆրանսահայություն*, *հաբեշահայություն* և համանման այլ հասկացություններ, բայց չունեինք *ադրբեջանահայություն* հասկացությունը: Չունեինք հավաքական անունը մեր ազգի հսկայական մի հատվածի, որը դարձավ մի հակամարտության զոհ, որի պատկերից դուրս է մնացել միայն այն պատճառով, որ թուրքը, նեղացնելով խնդրի աշխարհագրական ու քաղաքական իմաստները, կոչել էր այն «ղարաբաղյան հակամարտություն»: Հիմա էլ, ավելի նեղացնելով խնդիրը, շրջանառության մեջ է դնում «ադրբեջանական և հայկական համայնքների հակամարտություն Լեռնային Ղարաբաղում» բանաձևը և հակամարտության՝ այդ բանաձևմանը համապատասխանող ըմբռնումը:

Մենք կարող ենք և պարտավոր ենք ուղղել թույլ տրված սխալները: Մենք պարտավոր ենք օգնել ադրբեջանահայությանը՝ ինքնակազմակերպվելու և դառնալու ղարաբաղյան հակամարտության քաղաքական կարգավորման ինքնուրույն գործոն: Այլապես, պահանջատիրոջ իր իրավունքների գիտակցումը կորցրած, նա օտար ափերում կտրվի ուծացման տարերքին և կկորչի անանուն ու անհիշատակ: Փրկվելու համար նրան պիտի հանձնվի իր առաքելությունը:

Ադրբեջանահայության հիմնահարցը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման համատեքստում

Ղարաբաղյան հակամարտության աշխարհագրական, իսկ այնուհետև՝ նաև քաղաքական սահմանների նեղացումը մեր օրերում մի կողմից՝ Բաքվի, մյուս կողմից՝ Երևանի ու Ստեփանակերտի միջև ընթա-

ցող տեղեկատվական և դիվանագիտական պատերազմի հնարք կամ տեխնոլոգիա է, որ Բաքուն կիրառում է՝ օգտվելով միջազգային ասպարեզում մեր քաղաքական անվարժությունից ու անփորձությունից: Այն, որ Բաքվի հաջողություններն այդ ճակատում բացատրվում են հենց մեր անփորձությամբ, երևում է ադրբեջանահայության ցեղասպանության փաստի մեր գնահատումներում, մեր քաղաքական գիտակցության մեջ այդ խնդրի արծարծումներում:

Հայոց ցեղասպանությանը վերաբերող բոլոր հետազոտություններում նշվում է, որ 20-րդ դարի սկզբին հայկական կոտորածներ են եղել ոչ միայն բուն Օսմանյան կայսրության սահմաններում, այլև Պարսկաստանում և Անդրկովկասում՝ հատկապես նրա արևելյան շրջաններում: Բոլոր ուսումնասիրողները փաստում են, որ հայկական ջարդեր են եղել 1918թ. դեպի Անդրկովկաս թուրքական ռազմական ինտերվենցիայի ժամանակ:

Ռուսաստանը դուրս էր մնացել տարածաշրջանից: Թուրքիան առիթը հարմար էր գտնում Կովկասն «իր թևի տակ առնելու» համար: Պատերազմով և ռուսական հեղափոխությամբ պայմանավորված խառնակ իրավիճակը վերջինն օգտագործեց Անդրկովկաս մտնելու համար: Բայց թուրքական ներխուժումը միայն ռազմական գործողության բնույթ չուներ: Թուրքը չէր գալիս միայն տարածքներ գրավելու: Նա տարածաշրջան էր մտնում Հայոց ցեղասպանության իր պետական ռազմավարությունը շարունակելու, այն էթնիկական տարրը բնաջնջելու համար, որի մեջ տեսնում էր երկրամասը զավթելու իր ծրագրերի գլխավոր արգելքը: Պատահական չէ, որ թուրքերը նորանկախ Հայաստանի Հանրապետության վրա հարձակվեցին 1918-ի մայիսի 28-ին՝ հանրապետության հռչակման առաջին օրը: Դա նոր պետականությունն օրորոցում խեղդելու փորձ էր: Սարդարապատի, Բաշ Ապարանի ճակատամարտերում հայկական զորամիավորումներին և աշխարհազորին հաջողվեց փրկել նորածին հանրապետու-

թյունը: Բայց ուժերն անհավասար էին: Հայերին չհաջողվեց գլխովին ջարդել թուրքական կանոնավոր բանակը: Թուրքերը հնարավորություն ստացան շարժվել դեպի Բաքու, դեպի այն քաղաքը, որտեղ իշխանությունը գտնվում էր Բաքվի կոմունայի ձեռքում: Թուրքական կանոնավոր զորքերն Անդրկովկաս էին մտնում այդտեղ նոր թուրքական պետություն հիմնադրելու նպատակով: Դրա համար պետք էր գրավել Բաքուն, որը հռչակվել էր Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության մայրաքաղաք:

Դեպի Բաքու առաջխաղացման ամբողջ ճանապարհին թուրքական կանոնավոր բանակը զբաղված էր հայկական գյուղերի հրկիզումով և խաղաղ բնակչության ջարդերով: Աղդաշի, Արեշի, Վարդաշենի, Կուտկաշենի, Շամախու և դրանց շրջակա գյուղերի հազարավոր հայեր ու ուղիներ սրի քաշվեցին: Հրկիզվեցին հայկական և ուղիական տասնյակ գյուղեր: Եթե 1914թ. հայերի թիվը, օրինակ, Նուխու, Գեոկչայի, Շամախու և Արեշի գավառներում 73526 մարդ էր, ապա 1921թ. այդ թիվը ջարդերի և կոտորածների հետևանքով նվազել էր գրեթե վեց անգամ (12716 մարդ): Եթե Նուխու գավառում 1917թ. հայերը կազմում էին ազգաբնակչության 20,2%-ը, ապա թուրքական ինտերվենցիայից և մուսավաթական երկամյա տիրապետությունից հետո՝ 2,4%-ը: Պատկերը գրեթե նույնն էր Շամախու, Աղդաշի, Գեոկչայի գավառներում: Աղդաշի գավառում, ուր հայերն ազգաբնակչության 19,5%-ն էին կազմում, գրեթե հայ չմնաց (0,7%)[37]: Օգոստոսին արդեն Նուրի փաշան ձեռնարկում էր Բաքվի գրոհը: Հիանալի իմանալով, որ օրինական իշխանությունները երկրամասը հռչակել էին Խորհրդային Ռուսաստանի անկապտելի մաս, թուրքերը քաղաքը հանձնելու վերջնագիր ներկայացրին Բաքվի Հայոց ազգային խորհրդին: Դրանով իսկ թուրքական կողմն ընդունում էր, որ Բաքվի հիմնական պաշտպանները հայերն են: Սակայն հայերին ուղղված այդ վերջնագիրը նաև այլ

[37] Տվյալներն ըստ՝ ԲՅՀ, т. I, 1926, стр. 642:

քաղաքական ենթատեքստ ուներ: Դրանով թուրքական կողմը նախապատրաստում էր հայերի ջարդը քաղաք մտնելուց հետո[38]:

Բաքուն ընկավ սեպտեմբերի 15-ին: Թուրքական բանակի սվիններ-ի վրա քաղաք բերվեց Թբիլիսիում Անդրկովկասի մուսուլմանական խորհրդի կողմից հռչակված Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության Խան Խոյսկու կառավարությունը: Քաղաքի անկմանը հաջորդած երեք օրերի ընթացքում թուրք զորքն ու տեղական թաթարական խաժամուժը զբաղված էին հայերի կոտորածով և նրանց ունեցվածքի թալանով: Այդ սպանդին զոհ գնաց ավելի քան 30 000 հայ: Դա Հայոց ցեղասպանության թուրքական քաղաքականության շարունակությունն էր Օսմանյան կայսրության սահմաններից դուրս՝ այս անգամ իրագործված ոչ թե թուրքական խաժամուժի կամ ամբոխի, այլ կանոնավոր բանակի կողմից: Արևելյան Անդրկովկասում թուրքական կանոնավոր բանակի կողմից Թուրքիայի սահմաններից դուրս իրագործված հայերի կոտորածներն անհերքելի, անբեկանելի փաստարկ են այն մասին, որ թուրքերը դեռևս 19-րդ դարից առաջ են վարել հայերի ցեղասպանության ծրագրված քաղաքականություն: Բուն Օսմանյան կայսրության սահմաններում հայերի զանգվածային ջարդերը և տեղահանումները թուրք քաղաքական գործիչները և նրանց գործը շարունակող թուրք պատմաբաններն ու քաղաքագետները սովորաբար փորձում են արդարացնել այն «փաստարկով», իբր, անհուսալի տարր հանդիսացող հայերը ներքին վտանգ էին ներկայացնում պատերազմի մեջ մտած կայսրության համար: Արևելյան Անդրկովկասում, կայսրության սահմաններից դուրս թուրքական կանոնավոր բանակի կողմից իրագործված ցեղասպանական ակտերը հերքում են այդ «փաստարկը» հիմնովին: Բաքվի հայերը չէին կարող անհուսալի տարր համարվել և ոչ էլ արտաքին վտանգ ներկայացնել Թուրքիայի համար: Նրանց կոտորել են հենց որպես հայերի:

[38] Գերմանացիների և թուրքերի կողմից ներկայացված վերջնագրի և այդ կապակցությամբ Բաքվի Հայոց ազգային խորհրդի կատարած հայտարարության տեքստեր ընդգրկված են արդեն հիշատակված «Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918 – 1920թթ.» փաստաթղթերի ժողովածուում, էջ 82 և 84:

Արևմտյան Հայաստանի դեպքում թուրքերը ձեռնամուխ են եղել ոճիրն արդարացնող փաստարկների մշակմանը դեռևս սուլթան Համիդի ժամանակներում: Հայերի անհուսալիության, ոչ օրինապաշտ քաղաքացիներ լինելու մասին անհեթեթ պնդումները, հակառակ իրենց անհամոզչությանը, շարունակում են մնալ թուրքական քարոզչության թղթապանակներում: Սակայն թուրքերն այդ նույն փաստարկներին չեն կարող դիմել Արևելյան Անդրկովկասում (նաև Իրանի արևմտյան տարածքներում) կանոնավոր բանակի կողմից իրագործված հայկական ջարդերի արդարացման համար: Այդ տարածքը նրանց չի պատկանել: Այդտեղի հայերն իրենց քաղաքացիները չեն եղել և, հետևաբար, անհուսալի տարր չէին կարող լինել Թուրքիայի համար: Արևելյան Անդրկովկասի հայության ջարդերը ցեղասպանության փաստի հիմնավորման մեջ թուրքերի կողմից հատուկ փաստարկի նշանակություն են ստանում: Հայերի ցեղասպանությունն Օսմանյան կայսրությունում, հանրապետական Թուրքիայում և Արևելյան Անդրկովկասում (այստեղ արդեն 1918-1994թթ. ընկած ժամանակահատվածում) ոչ թե ցեղասպանական տարբեր ակտեր են, այլ նույն հանցագործի կատարած նույն ոճրագործությունն է, որն իրագործվել է նույն քաղաքականության հունում: Ցեղասպանը թուրքն է, զոհը՝ հայը:

Ընդ որում, Խորհրդային Ադրբեջանի դեպքում ցեղասպանության զոհն այդ խորհրդային հանրապետության հիմնադիր, պետականակիր ժողովուրդն է, հանգամանք, որ քաղաքական բացառիկ բնույթ է հաղորդում կատարված հանցագործությանը: Ցեղասպանն «ադրբեջացի» կեղծանվան տակ թաքնված նույն թուրքն է: Ադրբեջանահայությունը պետք է պայքարի ոչ միայն նյութական և բարոյական, այլև քաղաքական փոխհատուցում ստանալու համար: Այն բոլոր հիմքերն ունի հանդես գալու որպես քաղաքական պահանջատիրության սուբյեկտ:

Վաղուց ժամանակն է, որ Հայոց ցեղասպանության մեղադրական փաստարկների փաթեթում այս փաստերին հատուկ տեղ տրվի:

Հավելված 1

«Սովետական պատմական հանրագիտարանում» (տես՝ “Советская историческая энциклопедия” т. I, М. 1961, стр. 247) զետեղված այս նկարը վկայությունն է այն բանի, թե որքան մեծ է եղել հայերի դերը երկրամասում և հատկապես արդյունաբերական Ապշերոնում ծավալվող քաղաքական զարգացումներում: Բազմաթիվ են եղել տարբեր քաղաքական կողմնորոշումներ որդեգրած հրատարակություններն ու թերթերը: Բերված նկարում տեղ են գտել բոլշևիկյան գաղափարախոսությունը որդեգրած «Բանվորի ձայն» և «Կոչ» թերթերը:

Հավելված 2

Այս փաստաթուղթը, որ այսօր պահվում է ՀՀ պետական արխիվում, հաջողվել է ձեռք բերել Հայաստանի Առաջին Հանրապետության հետախուզությանը: Պայմանագիրը ցույց է տալիս, որ Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունը հիմնվել է որպես խամաճիկային թուրքական մի նոր պետություն, որպիսին մեր օրերում, այսպես կոչված, Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետությունն է: Պայմանագրի 10-րդ կետը Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությանը արգելում է առանց թուրքերի թույլտվության կամ համաձայնության արտաքին քաղաքական որևէ ինքնուրույն քայլ կատարել:



Военному Аташе Французской

При семъ препровождаю текстъ Турецко-Азербайджанскаго Военнаго Союза для ознакомленія Начальника Французской Военной Миссіи Полковника ДЕ-КОРБЕЛЛЬ.

ПРИЛОЖЕНІЕ: копія договора, полученная отъ Начальника Развѣдывательнаго Отдѣленія Штаба Командующаго Войсками Арменіи.

Генералъ-Маіоръ

Адъютантъ,
Поручикъ

ЦГИА РА
ф. 276, оп. 1, д. 184, л. 66-68

С секретно.

НАЧАЛЬНИКЪ
РАЗВѢДЫВАТЕЛЬНАГО ОТДѢЛЕНІЯ
ШТАБА КОМАНДУЮЩАГО ВОЙСКАМИ.
"7" іюня 1920 года.
№ Р0517
г. Эривань.

Представителю Военнаго Вѣдомства Арменіи при Дипломатической Миссіи въ Грузіи Генералу КИШМИШЕВУ.

Препровождая при семъ копію договора турецко-азербайджанскаго военнаго союза, сообщаю, что со всѣми свѣдѣніями соглашенія Мустафы-Кемаля съ большевиками, Ваше Превосходительство можетъ ознакомить Представителя Франціи, Полковника Де-КОРБЕЙЛЯ, равнымъ матеріалъ изъ развѣдывательныхъ сводокъ, начиная съ № 14, свѣдѣнія въ которыхъ почерпнуты изъ вполнѣ достовѣрныхъ источниковъ/изъ зашифрованныхъ телеграммъ между Командиромъ 15-го Турецкаго Корпуса и Военнымъ Министромъ/.

ПРИЛОЖЕНІЕ: Копія договора.

Секретно
№ 1ленъ 949
Сообщить п. Де-Корбейлю

Капитанъ
Поющникъ, Подпоручикъ

10/. Азербайджанское Правительство обязуется не заключать какое бы-ни было соглашеніе съ внѣшними Государствами безъ вѣдома и одобренія Оттоманскаго Правительства.

Հավելված 3

Բաքվում խորհրդային իշխանության հաստատումից անմիջապես հետո Ադր. ԽՍՀ՝ որպես արտազգային հանրապետության հետ կապված բոլոր փաստաթղթերը ընդունվում ու հռչակվում էին թյուրքերենով, հայերենով, ինչպես նաև ռուսերենով, որ մինչև ԽՍՀՄ լուծարումը պահպանեց ազգամիջյան հաղորդակցության լեզվի իր կարգավիճակը: Նկարում Հողի դեկրետն է այդ երեք լեզուներով (տես՝ “Советская историческая энциклопедия” т. I, М. 1961, стр. 247):



Декрет о земле. Май 1920 (на азербайджанском, армянском и русском языках).

Հավելված 4

Արդեն Խորհրդային Հայաստանի անկապտելի մաս ճանաչված Նախիջևանը բռնությամբ օտարվել է Մայր Հայաստանից 1921թ . Կարսի պայմանագրի համաձայն, որով Նախիջևանի երկրամասը հանձնվել է Խորհրդային Ադրբեջանի հովանավորությանը: Հակառակ այդ պայմանագրի 1923-ին հովանավորության հանձնված երկրամասին տրվեց ինքնավար հանրապետության կարգավիճակ՝ հիմնվեց Նախիջևանի Խորհրդային Ինքնավար Հանրապետությունը (Նախ. ԽԻՀ): 20-ական թվականներին հայերին հանգստացնելու համար ամեն կերպ տարփողվում էր Խորհրդային Ադրբեջանի ոչ ազգային բնույթը և այն գաղափարը, որ Նախիջևանը նաև նրա հայ ազգաբնակչության ինքնավարությունն է: Տասնամյակներ շարունակ դա ի ցույց էր դրվում նաև ինքնավար հանրապետության կուսակցական ու պետական ապարատում հայերի պաշտոնավարությամբ: Որպես կանոն կուսակցական ու պետական ապարատի «երկրորդ դեմքերը» հայեր էին: Նկարում պատկերված է Նախ. ԽԻՀ-ի դրոշը, որ կրում էր նաև ինքնավարության հայկական անվանումը, նույնպես դրա հաստատումն էր (տես՝ *ru.wikipedia.org*):

Հավելված 5

Հատկանշական է, որ նախկին Ադր. ԽՍՀ տարբեր շրջաններից աշխարհով մեկ սփռված հայ փախստականները առաջին հերթին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանն են դիմել իրենց շահերը տարբեր ատյաններում ներկայացնելու և պաշտպանելու խնդրանքով: Լուսանկարում ներկայացված դիմումները կնքված են ադրբեջանահայության տարբեր հայրենակցական միությունների ու հասարակական կազմակերպությունների կողմից: ԼՂԻՄ-ի իշխանություններին նման հարցով դիմելը բնավ պատահական բան չէ: Դրա մեջ արտացոլված է խորհրդային տարիների այն իրողությունը, որ ադրբեջանահայությունը ԼՂԻՄ-ը համարել է հանրապետությունում իր պետական պաշտպանվածության երաշխավորն ու գրավականը:



ՆԱԽԿԻՆ ԱԴՐԽՍՀ-ից ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ, ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱՊԱՀՊԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
Դ Ի Մ Ո Ւ Մ Ը
ԼՂՀ ՆԱԽԱԳԱՀԻՆ, ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

«Արցախ», «Գարդման», գանձակահայության «Միազանգ», «Շահումյան-Գեղարքունի» հայրենակցական միությունները, «Աշխատանք և բարեգործություն» բարեգործական միությունը, նախկին ԱդրԽՍՀ հայ ժողովրդի իրավունքների պաշտպանության նախաձեռնող խումբը, «Ֆենիքս» հասարակական կազմակերպությունը, «Շահեն Սեղբատ» բարեգործական հիմնադրամը, որոնք ներկայացնում են նախկին Խորհրդային Այդրբեջանից բռնահանված հայ ժողովրդի տարբեր հատվածները և պաշտպանում նրանց շահերը

– լիազորված լինելով իրենց անդամների, ինչպես նաև նախկին ԱդրԽՍՀ-ից բռնի տեղահանված հայության ԱՊՀ տարածքում գործող մի շարք այլ կազմակերպությունների կողմից,

– վկայակոչելով միջազգային իրավունքի սկզբունքներն ու նորմերը,

– հաստատելով, որ Ադրբեջանական Հանրապետությունը չունի հարավային Անդրկովկասի հայկական տարածքներին հավակնելու որևէ իրավական հիմք,

– արձանագրելով, որ նախկին ԱդրԽՍՀ-ից բռնատեղահանված հայերի անձնիթրար վիճակը Ադրբեջանական Հանրապետության կողմից նուազց մարդկային, տնտեսական ու բարոյական իրավունքների շարունակվող ոտնահարման հետևանքն է,

– հիշեցնելով, որ զանգվածային բռնությունների պատճառով իրենց տներն ու բնակավայրերը լքած հարյուր հազարավոր հայերի նյութական ու բարոյական վնասների փոխհատուցման հարցը ցայսօր չի բարձրացվել միջազգային ատյաններում,

– համոզված լինելով, որ առաց նախկին ԱդրԽՍՀ-ից տեղահանված հայության իրավունքների վերականգնման անհնար է հակամարտության համապարփակ կարգավորումը,

– վերուհաստատելով հայրենի եզերք վերադառնալու և իրենց հողերին ու օջախներին տեր կանգնելու վճռականությունը,

– նկատի առնելով, որ տեղահանված հայ բնակչությունը չունի որևէ ներկայացուցչական մարմին,

– հավաստելով ԼՂՀ պետականության կայացումը՝

ԴԻՄՈՒՄ Է ԼՂՀ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ՝
ԻՐԵՆՑ ՇԱՀԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՏՅԱՆՆԵՐՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅՐԵՆԻ ԵԶԵՐՔ ԻՐԵՆՑ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՍՊԱՌՈՎԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ

«Արցախ» հայրենակցական միություն՝

«Գարդման» հայրենակցական միություն՝

Գանձակահայության «Սիազանգ» հայրենակցական միություն՝

«Շահումյան-Գետաշեն» հայրենակցական միություն՝

«Աշխատանք և բարեգործություն» բարեգործական միություն՝

Նախկին ԱդրԽՍՀ հայ ժողովրդի իրավունքների
պաշտպանության նախաձեռնող խումբ՝

«Ֆենիքս» հասարակական կազմակերպություն՝

«Շահեն Մեղրյան» բարեգործական հիմնադրամ՝

Հավելված 6

1920-ական թթ. Ադր. ԽՍՀ պետական ու կուսակցական բոլոր փաստաթղթերում Նախիջևանի Խորհրդային Ինքնավար Հանրապետությունը և Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը առանց վերապահումների ներկայացվում էին որպես խորհրդային տիպի պետական կազմավորումներ: Դա վերաբերում էր նաև վիճակագրական, տնտեսական բնույթի փաստաթղթերին: Ստորև բերվող փաստաթուղթը դրանցից մեկն է:

БЮДЖЕТЫ АЗЕРБАЙДЖАНСКОЙ ССР И ЕЕ НАЦИОНАЛЬНО-ГОСУДАРСТВЕННЫХ ФОРМИРОВАНИЙ (НАХИЧЕВАНСКАЯ АССР И НКАО) НА 1924/25 И 1925/26 БЮДЖЕТНЫЕ ГОДЫ

Общий объем бюджета АССР (с автоном. респ. и обл.) на 1925/26 бюд. г. утвержден в суммах:

АССР (без автон. респ. и обл.)	АОНК	НССР	АССР (с автоном. респ. и обл.)
19 112 949	827 818	848 580	19 823 469

По сравнению с бюджетом 1924/25 г. он выражается (в общих суммах) в следующем виде:

АССР (без автон. респ. и обл.)		АОНК		НССР		АССР (с автоном. респ. и обл.)	
Назначено на							
1924/25 г.	1925/26 г.	1924/25 г.	1925/26	1924/25 г.	1925/26	1924/25 г.	1925/26 г.
13 697 625	19 112 949	596 523	818	525 931	848 580	14 503 887	19 625 469

Приведенные выше данные показывают, что бюдж. 1925/26 г. возрос:

а) АССР (без автоном. респ. и обл.) на 5 415 324 р. или 39%
б) АОН Карабаха « 231 295 « 38%
в) НССР « 322 649 « 61%
г) АССР (с автон. респ. и обл.) « 5 121 582 « 35%

Отчет ЦКК АКП(б) (май 1924 г. — октябрь 1925 г.) VII съезду АКП(б). Баку, 1925. С. 119